

# Երեսնամյա այսպիսին

ՄԱՅՐ ԱՔՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՃՆԻ  
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,  
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

## Մայր Աթոռի հայտարարությունը

Ստորեն դատապարտում ենք Ադրբեջանի իշխանությունների կողմից իրականացվող սադրանքը՝ բնապահական կեղծ պատճառաբանություններով Արցախը Հայաստանի հետ կապող ճանապարհի արգելափակումը, ինչի հետևանքով վտանգվել են արցախցիների կենսական իրավունքները՝ կանգնեցնելով արցախահայությանը հումանիտար աղետի առաջ:

Նմանօրինակ սադրիչ գործողություններն ուղղված են էթնիկ զտումների իրականացմանը, որը հերթական անգամ ի ցույց է դնում Ադրբեջանի հայատյաց քաղաքականությունը: Ստեղծված կացությունն անվիճարկելի է դարձնում այն իրողությունը, որ արցախահայության անվտանգ կյանքը հնարավոր չէ Ադրբեջանի կազմում:


Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից արդեն իսկ դիմումներ են հղվել քույր եկեղեցիների պետերին, միջազգային ու միջեկեղեցական կազմակերպություններին՝ Ադրբեջանի այս

անմարդկային գործողություններին հակազդելու եւ արցախահայության հումանիտար աղետալի իրավիճակը հաղթահարելու համար:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի սպասումն է, որ միջազգային համարությունը համարժեք գնահատականներ կտա մարդու իրավունքների հիմնարար նորմերը ոտնահարող Ադրբեջանի սադրանքներին, որոնք մեծապես վտանգում են տարածաշրջանի փխրուն խաղաղությունն ու կայունությունը:

Հորդորում ենք նաեւ Կովկասի մահմեդականների վարչության նախագահ Շեյխ ուլ իսլամ Ալլահշուքյուր Փաշազադեին, մարդասիրական իր կոչմանը հավատարիմ, շղափելի եւ առարկայական քայլեր ձեռնարկել ադրբեջանական իրաւիչ գործողությունները բացառելու համար:

Աղոթում ենք, որ Աստված Իր աջի հովանու ներքո խաղաղ ու անվտանգ պահի Արցախ աշխարհը, միասնական ու համախումբ՝ մեր ժողովրդին:



## ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

### Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց



Դեկտեմբերի 2-ին

#### «Սոս Արեւելքի քրիստոնյաներ» կազմակերպության անդամներին

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Սոս Արեւելքի քրիստոնյաներ» ֆրանսիական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի անդամներին՝ գլխավորությամբ մասնաճյուղի ղեկավար Քորանթեն Բլերկինի:

Հանդիպմանը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի իրատարակչական բաժնի եւ «Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանի տնօրեն Տ. Արարատ քին. Պողոսյանը Նորին Սրբությանը ներկայացրեց հյուրերին՝ ընդգծելով, որ կազմակերպության աջակցությամբ արդիականացվում են Մայր Աթոռի տպարանի սարքավորումները:

Իր հերթին պարոն Քորանթեն Բլերկինն անդրադարձավ «Սոս Արեւելքի քրիստոնյա-

ներ» կազմակերպության գործունեությանը Միջին եւ Մերձավոր Արեւելքում՝ ի մասնավորի Հայոց Հայրապետին ներկայացնելով Հայաստանի տարբեր մարզերում իրականացվող կրթական, գյուղատնտեսական, առողջապահական, ինչպես նաեւ քրիստոնեական եւ մշակութային հուշարձանների վերականգնմանն ուղղված ծրագրերը:

Ողջունելով հյուրերի այցը հայոց հոգեւոր կենտրոն՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր երախտագիտությունը հայտնեց կազմակերպությանը՝ Հայաստանին եւ հայ ժողովրդին հետպատերազմյան մարտահրավերների հաղթահարման գործում ցուցաբերած աջակցության համար:

Ձրույցի ընթացքում Նորին Սրբությունն անդրադարձավ արցախյան 44-օրյա պա-

տերազմի եւ Ադրբեջանի՝ Հայաստանի նկատմամբ սանձազերծած ագրեսիայի հետեւանքով զոհված, ինչպես նաեւ վիրավորում ստացած զինվորականների, ռազ-

մական գործողությունների ընթացքում անհայտ կորած հայորդիների ընտանիքներին Մայր Աթոռի կողմից ցուցաբերվող գորակցության ու աջակցության ծրագրերին:

Դեկտեմբերի 7-ին

#### Գերմանիայի Բունդեսթագի «Միջազգային խորհրդարանական կրթաթոշակ» ծրագրի պատվիրակությանը

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Միջազգային խորհրդարանական կրթաթոշակ» ծրագրի՝ Գերմանիայի Բունդեսթագի ընտրական հանձնաժողովի պատգամավոր Քրիստիան Հասսեի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ ՀՀ-ում Գերմանիայի Դաշնային Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Վիկտոր Ռիխտերի:

Պարոն Քրիստիան Հասսեն, Նորին Սրբությանը ներկայացնելով «Միջազգային խորհրդարանական կրթաթոշակ» ծրա-

գիրը, ընդգծեց, որ այն հնարավորություն կտա մասնակիցներին ծանոթանալու Գերմանիայի Դաշնային Հանրապետության խորհրդարանական կառավարման համակարգին եւ կուտակած փորձը կիրառելու հայրենիքում:

Հանդիպմանն անդրադարձ կատարվեց նաեւ տարածաշրջանում տեղի ունեցող զարգացումներին, կայունության ու խաղաղության հաստատման ուղղությամբ գործադրվող ջանքերին եւ այս առնչությամբ առկա մտախոհություններին: ➔ էջ 2





## Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց



→ էջ 1

Դեկտեմբերի 14-ին **ՀՀ-ում ԱՄՆ դեսպանին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Ամերիկայի Միացյալ Նահանգների արտակարգ և լիազոր դեսպան Լին Թրեյսիին, որն ավարտում է իր դիվանագիտական առաքելությունը Հայաստանում:

Հանդիպման ընթացքում մասնավոր անդրադարձ կատարվեց վերջին օրերին Լաչինի միջանցքի շուրջ ստեղծված իրավիճակին, որի հետևանքով Լեռնային Ղարաբաղը հայտնվել է շրջափակման մեջ: Վեհափառ Հայրապետը, դատապարտելով սույն իրողությունը, ընդգծեց, որ Ադրբեջանի նպատակն Արցախի հայաթափումն է, իսկ նման հայատյաց քաղաքականությունը հանգեցնելու է հումանիտար աղետի:

Իրավիճակի հանգուցալուծման համար Նորին Սրբությունը կենսական նկատեց միջազգային համրության մասնավորապես ԵԱՀԿ Մինսկի խմբի համաձայնագրաբեկ երկրների համարժեք միջոցառումները՝ ի խնդիր Ադրբեջանի վայրագ գործողությունների կասեցման:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ ՀՀ-ում ԱՄՆ դեսպանը զրուցեցին նաեւ պատերազմի հետեւանքների հաղթահարման, Արցախի հիմնախնդրի խաղաղ կարգավորման եւ Ադրբեջանի վերահսկողության տակ հայտնված հայկական պատմական հոգեւոր-մշակութային ժառանգության պահպանման ուղղությամբ տարվող աշխատանքների մասին: Այս առնչությամբ Նորին Սրբությունն իր գնահատանքը փոխանցեց, ի դեմս դեսպանի, ԱՄՆ իշխանություններին՝ պատերազմի ու հետպատերազմյան շրջանում Հայաստանի ցուցաբերած զորակցության համար:

## Տոն հայոց առաջին լուսավորիչների

Դեկտեմբերի 3-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին տոնախմբեց հայոց առաջին լուսավորիչներ Սուրբ Թադեոս եւ Սուրբ Բարդուղիմեոս առաքյալների տոնը: Դեռեւս 2014 թվականին Ն. Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Երկրորդ Ճայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի սրբատառ կոնդակով տոնը հռչակվել է աստվածամուխ Սուրբ Գեղարդի ուխտի օր: Այդ օրը հավատացյալների օրհնության ու երկրպագության համար դուրս է բերվում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում պահվող համաքրիստոնեական սրբությունը:

Տոնի առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Ս. Հովհաննես Մկրտիչ եւ Ս. Վարդան մատուռ-մկրտարանում մատուցվեց Սուրբ Պատարագ: Պատարագիչն էր Մայր Աթոռի թանգարանների եւ արխիվի տնօրեն Ս. Ասողիկ արք. Կարապետյանը:

Սուրբ Պատարագին ներկա էին Մայր Աթոռում պաշտոնավարող եպիսկոպոսներ, միաբաններ, հայաստանյան թեմերի առաջնորդներ եւ բազմաթիվ ուխտավորներ:

Սուրբ Պատարագի ընթացքում, եկեղեցական թափորի առաջնորդությամբ, Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռնադրման աստուծո-մկրտարան բերվեց աստվածամուխ Սուրբ Գեղարդը:

Հայր սուրբը, իր քարոզում անդրադառնալով տոնի խորհրդին ու եկեղեցու առաքելությանը, ի մասնավորի նշեց. «Եկեղեցին գիշեր ու զօր իր ողջ կարողությամբ



Աստծու խոսքն է բաշխում մեզ՝ ամենքիս: Ինչպես դարեր առաջ առաքելական քարոզչությամբ մեր նախնիներն իրենց սրտերը բացեցին Աստծու լույսի առջեւ ու դարձան հետեւորդները Քրիստոսի, այնպես էլ մենք այսօր հավատարմորեն հետեւենք Քրիստոս Աստծուն, Նրա Սուրբ Եկեղեցուն եւ թույլ չտանք, որ այս դժվարին օրերին խավարը հաղթի լույսին»:



Հայր Ասողիկը հորդորեց անդադար լսել Առաքելական Սուրբ Եկեղեցու պատգամները եւ կյանքի կոչել դրանք, որպեսզի արժանի լինենք Աստծու արքայությանը եւ Սուրբ Թադեոս ու Սուրբ Բարդուղիմեոս առաքյալների բարեխոսությամբ բարձր պահենք հայոց առաջին լուսավորիչների քարոզչությամբ Հայոց աշխարհում հաստատված խաչը:

Սուրբ Պատարագի ավարտին Հայոց

Հայրապետը Պահպանիչ աղոթքով եւ հրաշագործ Սուրբ Գեղարդով օրհնեց ներկաներին, ապա հավատացյալներին հնարավորություն ընձեռվեց երկրպագելու եւ համբուրելու համաքրիստոնեական սրբությունը:

Աստվածամուխ Սուրբ Գեղարդը Մայր Աթոռի մարտուռ-մկրտարանում մնաց մինչեւ երեկոյան ժամերգության ավարտը:



## Հոգեհանգիստ՝ ի հիշատակ երկրաժամի զոհերի

Դեկտեմբերի 7-ին, Ն. Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Երկրորդ Ճայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Ս. Հովհաննես Մկրտիչ եւ Ս. Վարդան մատուռ-մկրտարանում կատարվեց հոգեհանգիստ՝

ի հիշատակ 1988 թվականի դեկտեմբերի 7-ի երկրաշարժի զոհերի:

Մայր Աթոռի միաբանությունը զոհված հայորդիների հոգիների խաղաղության եւ հանգստության համար աղոթք բարձրացրեց առ Աստված:

## Նոր նշանակում

Ն. Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Երկրորդ Ճայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ սույն թվականի դեկտեմբերի 1-ից երկարամյա ծառայությունից հետո վաստակյալ հանգստի է կոչվում Արգենտինայի եւ Հիլիի հայոց թեմի առաջնորդ Ս. Գիսակ արք. Մուրադյանը:

Արգենտինայի եւ Հիլիի հայոց թեմի առաջնորդական տեղապահ է նշանակվում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Ս. Առեն վրդ. Շահենյանը:

**Լրատվական նյութերը՝  
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի  
տեղեկատվական համակարգի**

## Հայոց առաջին լուսավորիչները

Նայ Առաքելական Սուրբ Եկեղեցու սրբազան ավանդությունը Հայաստանում քրիստոնեության տարածումն անմիջականորեն կապում է մեր Տեր եւ Փրկիչ Հիսուս Քրիստոսի առաքյալներ Թադեոսի եւ Բարդուղիմեոսի քարոզչության հետ. Հայոց նորահիմն Եկեղեցին հետագայում կոչվում է «Առաքելական»: Սակավաթիվ աղբյուրների պահպանած տեղեկությունների համաձայն՝ սուրբ Թադեոսի եւ սուրբ Բարդուղիմեոսի քարոզչության շնորհիվ դարձի եկան բազմաթիվ հայեր՝ այդ թվում նաեւ արքայադուստր Սանդուխտը, արքայաքյուր Ոգուհին, Ոսկյանք, Սուքիասյանք եւ այլք: Սանատրուկ արքայի հալածանքների արդյունքում հայոց հնամենի հողում նահատակվեցին թե՛ «հայոց առաջին լուսավորիչներ» անվանված առաքյալները, թե՛ առաջին հայ քրիստոնյաներից շատերը, սակայն հայոց նախաշափղ առաքյալների սերմանած տիրական վարդապետության սերմերն ամուր արմատներ գցեցին ու պտղաբերեցին՝ Հայոց աշխարհը զարդարելով քրիստոնեական բազմապիսի շնորհների ու աներկյուղ հավատքի առատ հունձքով:

Հիրավի, Հայոց հողի վրա քրիստոնեությունը սերմանվել է դեռեւս առաքելական շրջանում, ուստի սուրբ Թադեոս ու սուրբ Բարդուղիմեոս առաքյալները ճշմարտացիորեն համարվում են հայ ժողովրդի առաջին ուսուցիչները: Սուրբ Թադեոսը, որին Հե-

րոմիմոսը կոչում է «Թադեոս Եռանվանի», այսինքն՝ երեք անուն ունեցող, քրիստոնեությունը քարոզելու նպատակով նախ գնում է Եդեսիա՝ արձագանքելով երանելի Աբգար թագավորի՝ Հիսուս Քրիստոսին ուղղած խնդրանքին, որով Եդեսիայի արքան հայցում էր. «Աղաչում եմ, որ նեղություն կրես, զաս ինձ մոտ եւ բժշկես իմ ունեցած հիվանդությունը: Նաեւ լսեցի, թե հրեաները քեզանից դժգոհում են եւ ուզում են քեզ չարչարել, բայց ես մի փոքր ու գեղեցիկ քաղաք ունեմ, որ երկուսիս էլ բավական է»:

Քրիստոս, որ այդ ժամանակ քարոզում էր Հրեաստանում, բայց եւ անկարող էր զանցառել իր փրկչական տնօրինության կարեւորագույն մաս կազմող քարոզչությունն ու մերժել եդեսացիների երանելի արքային, վերջինիս խոստանում է իր փոխարեն Եդեսիա ուղարկել իր առաքյալներից որեւէ մեկին: Եվ ահա Հիսուսի համբարձումից հետո սուրբ Թադեոսը, աստվածային նախախնամության համաձայն, մեկնում է Եդեսիա, բժշկում, ապա նաեւ մկրտում Աբգար թագավորին: Եդեսիայում քարոզչությունն ավարտելուց հետո սրբազան առաքյալը գալիս է Հայաստան:

Հայոց աշխարհում սուրբ Թադեոս առաքյալն աներկյուղ քարոզում է Քրիստոսի Ավետարանի ճշմարտությունը՝ փրկչական բարի լուրն ավետելով նաեւ հայոց թագավորական հարկից ներս: → էջ 3





# Հայոց առաջին լուսավորիչները

✦ էջ 2

Փրկության ավետիսն ընդունում է նաեւ Հայոց Սանատրուկ արքայի դուստրը՝ Սանդուխտ կույսը:

Սանատրուկ թագավորը, սակայն, հրաժարվում է ընդունել քրիստոնեությունը: Առաքյալի բոլոր հորդորներն ու ձեռնարկումներն ապարդյուն են անցնում: Սանատրուկ արքան, մի կողմ թողնելով հայրական գութը, հրամայում է սպանել թե՛ իր դստերը եւ թե՛ Թադեոս առաքյալին: Սուրբ Թադեոսը նահատակվում է Արտազ գավառի Շավարշավան գյուղաքաղաքում: Նրա նահատակության օրը 3500 հայ քրիստոնեություն է ընդունում:

Եվ ահա Հայաստան է գալիս Հիսուսի տասներկու առաքյալներից եւս մեկը՝ սուրբ Բարդուղիմեոսը, որի եբրայերեն «Նաթա-նայել» անվան հայերեն խորհրդանշական վերտառությունն են «Աստվածատուր» անվանումն ու սրբազան կոչումը. առաքյալ, որն իսկապես աստվածատուր պարզեւ էր հայ ժողովրդի համար: Սա այն առաքյալն է, որի մասին Աստվածորդին ասաց. «Ահա ճշմարիտ մի խրայելացի, որի մեջ նեմգություն չկա» (Հովհ. Ա 47): Սուրբ Բարդուղիմեոսն իր քարոզչությունն սկսեց Պարսկաստանի շրջաններից եւ հասավ մինչեւ Հնդկաստանի սահմանները: ԺԳ դարի հայոց պատմիչ Ստեփանոս Օրբելյանը գրում է, որ առաքյալը Գողթնում Տյառնընդառաջ

անունով եկեղեցի է կառուցել, որից հետո տեղափոխվել է Արտաշատ քաղաք: Սուրբ Բարդուղիմեոս առաքյալը նույնպես փորձում է քրիստոնեությունը քարոզել Սանատրուկ թագավորի արքունիքում: Թագավորի ազգականներից եւ իշխանուհիներից ոմանք, նախընտրելով հոգեւոր բարձրագույն վայելքները, դարձի եկան հրաժարվեցին պալատական ապականություններից եւ ընդունեցին քրիստոնեությունը: Նորադարձների թվում էր նաեւ արքայաքույրը՝ Ոգուհի իշխանուհին: Թագավորը բանտարկում է առաքյալին եւ Ոգուհուն ու հրամայում չարչարանքների ենթարկելով սպանել նրանց:

Առաքյալների քարոզչության պատմական շարունակությունը եղավ 301 թվականը, երբ Հայաստանն առաջինն ընդունեց քրիստոնեությունը որպես պետական կրոն եւ ժամանակի հոլովույթում բազմաթիվ անգամներ պայքարեց իր հավատքը պահպանելու համար:

Քրիստոսի երկու առաքյալների միջոցով Աստված ներգործեց հայ ժողովրդի պատմության վրա: Ուստի եւ մենք, բարեխոս ունենալով Քրիստոսի սուրբ առաքյալներին, հայցենք թողություն մեր մեղքերի եւ հաստատություն Հայ Առաքելական Սուրբ եկեղեցու համար:

ԱՆՆԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ



## Ս. Բարդուղիմեոս եւ Ս. Թադեոս առաքյալների տոնի առթիվ

Բարձրյալ Աստծու ծնվ գթության Աղբյուրացած սուրբ առաքյալ Ու վարդապետ հայրեր համայն եկեղեցու Հայաստանյայց, Որ հիմնադիր դարձաք հայոց Սրբազնասուրբ լույս հավատքի եվ բանացիք սրտերը գոց, Հոգիները սերն անճանաչ, Ու վառեցիք տիեզերքի Ջահերն անշեջ ու անմահաճ

Սիրով բարի Վարդապետի, Ո՛վ Թադեոս՝ լուսավորյալ Սուրբ առաքյալ Տեր-Ամնահի, եվ քաջ հովիվ Հովվապետի՝ «Աստվածատուր» անուն արի, Բարեխոսե՛ք դուք առ Բարձրյալ հաղաղության ճիշդ աշխարհի Ու սրբության համար համայն եկեղեցու Հայաստանյան...

Գեորգ սրկ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

# Դավիթ Անհաղթի՝ Խաչին Նվիրված Ներբողը եւ դրա մեկնությունները

Սկիզբը՝ թիվ 22

## Մաս Բ. «Բարձրացուցեք»-ի աստվածաբանական վերլուծությունը

«Բարձրացուցեք»-ը «Ներբողեան» է՝ նվիրված սուրբ Խաչին, սակայն դրանում շոշափվում են աստվածաբանական տարբեր հարցեր՝ քրիստոսաբանություն, փրկագործություն, մարեմաբանություն, եկեղեցաբանություն, վախճանաբանություն եւ այլն:

Դավիթ Անհաղթն իր Ներբողի բնաբան է ընտրել Սաղմոսաց գրքից. «Բարձր արարեք զՏեր Աստուած մեր. երկիր պագեք պատուանդանի ոտից նորա» (Սաղմ. ԴԸ 5, 9): Հին Ուխտում Տիրոջ ոտքերի պատվանդանը համարվում էր Սիոն լեռը, իսկ Նոր Ուխտում այդ պատվանդանը Խաչն է, որի վրա բարձրացավ Քրիստոս Աստված: Դավիթ փիլիսոփան իրեն համեմատում է Դավիթ մարգարեի հետ, որն իսրայելացիներից հորդորում էր երկրպագել Սիոն լեռը:

Դավիթ Անհաղթը հավատի «սուրբ եւ կատարեալ» մանուկներից հորդորում է ամենուրեք երկրպագել սուրբ Խաչին: Այստեղ գործածվող «հաւատոյ մանկունք» արտահայտությունն առնչվում է հայկական, ինչպես նաեւ օտար աղբյուրներում հանդիպող «ուխտի մանկունք», «մանկունք եկեղեցւոյ» հասկացություններին: Վերջինները մեկնաբանվել են հիմնականում իբրեւ «հոգեւորականություն», «հավատացյալների համայնք»: Նշենք, որ Դավիթ Անհաղթի կիրառած «հաւատոյ մանկունք» արտահայտությանը զուգահեռ՝ Ս. Ներսես Շնորհալին «Բարձրացուցեք»-ի մեկնության մեջ (որին կանդաղառնանք 3-րդ մասում) հավասարապես կիրառում է «մանկունք Նոր Սիոնի», «մանկունք եկեղեցւոյ», «որդիք եկեղեցւոյ» համարժեքները: Ուշագրավ է, որ «Բարձրացուցեք»-ում «հաւատոյ մանկունք»-ից առաջ դրված «սուրբ, կատարեալ» հատկանիշներով Դավիթ Անհաղթը «Սահմանք իմաստասիրութեան» երկուն բնորոշում է աստվածաման փիլիսոփային. «Կատարեալ իմաստասերն ման է Աստուծոյ»: «Կատարեալ» ասելով՝ Դավիթ



Անհաղթը հասկանում է բարի, իմաստուն եւ ուժեղ. կատարյալ փիլիսոփան բնութագրվում է բարությանը (որովհետեւ Աստծու նման նա նույնպես խնամում է բոլորին, ինչ էլ տանում անկատար հոգիների մասին՝ հասցնելով կատարյալ գիտության), իմաստությամբ (որովհետեւ ինչպես Աստված ամեն ինչ գիտի, այնպես եւ կատարյալ փիլիսոփան է ձգտում ամեն ինչ իմանալ) եւ ուժով (որովհետեւ ինչպես Աստված կարող է անել այն ամենը, ինչ կամենում է, այնպես եւ կատարյալ փիլիսոփան կամենում է այնքան, որքան կարող է անել): Այսպիսով՝ Դավիթ Անհաղթի համար «կատարեալ»-ը աստվածամանության տարբեր հատկանիշները միավորող խորիմաստ եզրույթ է: «Սահմանք իմաստասիրութեան» երկի մեկ այլ հատկանիշն խոստովանում է ամենվեց մասին՝ հեղինակը գրում է. «Իսկ մանուկին Աստուծոյ է սուրբն եւ արդարն զոլ հանդերձ խոհեմութեամբ»: «Հանդերձ խոհեմութեամբ»-ը Դավիթ Անհաղթը բացատրում է որպես տեսական փիլիսոփա-

յության, իսկ «սուրբ եւ արդար» լինելը՝ որպես գործնական փիլիսոփայության մաս: Սրա հիմքում ընկած է նորալատոնական փիլիսոփայության այն միտքը, որ Աստծուն մոտենալու համար պետք է լինել մարմնական կրթերից մաքրված եւ մտքով կատարյալ, քանի որ «կատարեալ իմաստասեր է՝ ոչ որ բազում ինչ գիտե, այլ զախտս կարող զոլ հնազանդեցուցանել»: Թե՛ «Բարձրացուցեք»-ում եւ թե՛ «Սահմանք...»-ում հստակորեն նշմարվում է աստվածացման նորալատոնական փիլիսոփայության եւ հայրաբանության մեջ ձեւավորված եռաստիճան ճանապարհը՝ մաքրություն, լուսավորություն, աստվածացում: Առաջին աստիճանի՝ մաքրության համար փիլիսոփա-աստվածաբան Դավիթ Անհաղթը կարեւորում է կրթերի սպանումը՝ որպես գործնական փիլիսոփայություն, որը զուգադրում է Խաչին խոնարհաբար երկրպագելուն (խոնարհ լինելը նույնպես գործնական փիլիսոփայության կարեւոր դրույթներից է), ինչը, իհարկե, զուտ երկրպագությունից բացի, ունի բարոյագործական, ինչպես նաեւ մտահայեցողական նշանակություն: Դավիթ Անհաղթի համար աստվածացման երկրորդ աստիճանը գիտությունների գիտություն եւ արվեստների արվեստ փիլիսոփայությունն է: Եվ այս ամենից հետո միայն մաքրագործված եւ կատարյալ փիլիսոփան կարող է մոտենալ աստվածային խորհրդին, հասնել աստվածամանությանը: Եվ ինչպես «Սահմանք...»-ում է ասվում, մարդը հնարավորություն ունի Աստծուն մանվելու «ըստ կարողութեան», նույնպես եւ Խաչին խոնարհաբար երկրպագելը, այսինքն՝ կատարելության ճանապարհին անցնելը, հնարավոր է «որչափ ի կարի մերում է»:

Կարող ենք ասել, որ «Բարձրացուցեք»-ում «հավատի մանուկներին» բնորոշող «սուրբ» եւ «կատարյալ» բառերը պատահական չեն ընտրված. «սուրբ»-ն աստվածացման առաջին, իսկ «կատարյալ»-ը երկրորդ աստիճանն է: Կարծում ենք՝ այս եզրերը բառացիորեն եւ զարգացման հիմնված են Նոր Կտակարանի՝ «Երանի այնոցիկ, որ սուրբ են սրտիւք, զի նոքա զԱստուած տեսցեն» եւ «Եղերուք դուք կատարեալք, որպես եւ Հայրն ձեր երկնաւոր

կատարեալ է» (Մատթ. Ե 8—9, 48) Քրիստոսի խոսքերի վրա:

Վերը նշված խիստ հետաքրքրական փիլիսոփայական-աստվածաբանական մոտեցից հետո Դավիթ Անհաղթը կարեւոր է համարում բացատրել «Խաչ» բառի նշանակությունը («այլափոխութեան»)՝ բաժա-



նելով չորս եղանակի՝ բնական, սեռական, ձեւական եւ իմացական: Բնականն այն է, որ «հոմանունակի» կոչվում է փայտ, ինչպես սովորական փայտը: Երկրորդը՝ մասնավոր (սեռական) հատկանիշն այն է, որ այդ փայտը կիպարիս է (ըստ ավանդության՝ սրանից է պատրաստված եղել Քրիստոսի խաչափայտը): Երրորդ՝ ձեւական եղանակը ցույց է տալիս, որ խաչը սպանության գործիք է: Իսկ չորրորդ՝ իմացական եղանակը, որ «ի վեր է, քան զբան», այն է, որ այդ փայտը «աստուածախաչ» է եւ կյանքի գործիք: Դավիթ Անհաղթը փորձում է բացատրել Խաչի խորհուրդը ձեւականի եւ իմացականի հակադրությամբ, որոնք միաժամանակ միավորվում են Խաչի մեջ: Ինչպես կարող է որեւէ մեկը չհիանալ այս վերջին իմացական հատկանիշով, — հռետորական հարցադրում է ամուն Դավիթ Անհաղթը, քանի որ այն սպանության գործիք է, բայցեւ միաժամանակ՝ կյանքի. Խաչի ձեւը ցույց է տալիս մահը, իսկ գործությունը՝ կյանքը: ➡ էջ 4

# Դավիթ Անհաղթի՝ Խաչին Նվիրված Ներբողը եւ դրա մեկնությունները



← էջ 3

## Մաս Գ. Խաչի աստվածաբանությունը. Յին եւ Նոր Կտակարանների գլուգադրումը «Բարձրացուցէք»-ում

Խաչի բուն աստվածաբանական վերլուծությունը Դավիթ Անհաղթն սկսում է Պողոս առաքյալի հետեւյալ խոսքով. «Այլ ինձ քաւ լիցի պարծել, բայց միայն ի խաչն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որով ինձ աշխարհի ի խաչ ելեալ է, եւ ես՝ աշխարհի» (Գաղ. 2 14–15): Շարունակելով առաքյալի միտքը՝ նա գրում է. «Եւ աստուածախաչ ասելով, ո՛վ աստուածասէրք, մի պատկառեսցուք, քանզի պարծանք պարծանաց է սա առ մեզ ըստ Պաւղոսի.... Ապա ուրեմն ոչ պատկառանք սա մեզ, այլ պարծանք պարծանաց. վասն զի աստուածագոր մեր փրկութիւնս է»: Փրկության ավետիսը տվեց հրեշտակը, որը սփռվելով գերեզման այցելած կանանց՝ հայտնեց խաչյալի հարության մասին:

Խաչի աստվածաբանությունն անխզելիորեն կապված է քրիստոսաբանության հետ: «Բարձրացուցէք»-ում կիրառվող «աստուածախաչ» բառն ինքնին դավանաբանական, քրիստոսաբանական նշանակություն ունեցող եզր է, ինչպես եւ «Աստուածածին»-ը: Ուղղափառ քրիստոսաբանությունը ու մարեմաբանությունն ուղղակիորեն առնչվում են փրկագործության վարդապետության հետ, որն սկսվում է Սուրբ Կույսին միջոցով Բանի մարդեղությանը, իսկ խաչով լրման է հասնում Քրիստոսի տնօրինական գործունեությունը: Աստծու կատարելապես մարդացման եւ խաչելության վերաբերյալ իր համոզումը Դավիթ Անհաղթն ամփոփում է հետեւյալ խոսքով. «....ըստ որում աստուածածին ծնողն, եւ նոյն ինքն ծնեալն

Աստուած անպարագրելի եւ անբաւ.... եւ խաչս Աստուծոյ խաչ, եւ նոյն ինքն խաչեալն Աստուած անմահ, անպարագրելի եւ անբաւ»: Ինչպես Խաչի աստվածաբանությունն է կապված մարեմաբանության հետ, այնպես եւ խաչը Դավիթ Անհաղթը խորհրդաբանորեն համեմատում է Աստվածամոր հետ: Խաչը նման է անկեզ մորենուն, այսինքն՝ Սուրբ Կույսին, որի մարմինը եւ զգայարանները կարողացան դիմանալ՝ կրելով անտանելի շուրջ: Նույնպես եւ խաչը, որի վրա հոսել է Քրիստոսի հրախառն սուրբ արյունը, կարողացավ անկեզ մնալ, ինչի համար Սուրբ Կույսը, որն իր որովայնում էր կրել այդ շուրջ, կամավոր երկրպագեց Նրան: Աստծու կատարելապես մարդացմանը եւ խաչելությանը իրականացրած փրկագործությանը Դավիթ Անհաղթն անդրադառնում է Ներբողի տարբեր դրվագներում: Այսպես՝ խաչը համեմատելով Նոյի տապանի հետ՝ նա գրում է, որ Նոյի ուղարկած շուրջաբեր աղավնու փոխարեն Քրիստոս արձակեց իր «սուրբ, մտաւոր, մարդկեղէն ոգին»՝ ձիթենու ճյուղի նման մարդկությանը բերելով որդեգրության պայմանը: Մեկ այլ հատվածում Խաչի երկու տախտակները համեմատում է մարդու հոգու եւ իմաց զգայարաններ ունեցող մարմնի հետ: Անդրադառնալով փրկագործության խորհրդին՝ Դավիթ Անհաղթ գրում է. «Արդ ուրեմն ասելով խաչ՝ աստ իմասցի Գողգոթայ, եւ աստն խաչելութիւնն, աստ զենումն եւ ի սմին փրկագործութիւնն»: Ակնարկվում է Ադամի՝ Գողգոթայում թաղված լինելու մասին ավանդությունը. նա մեռավ՝ «փայտից վիրավորվելով»: Իսկ երկնային Ադամը, ցանկանալով փրկագործել այստեղ թաղված նախահորը, մարդկային մարմին առավ, ծաշակելով մահը՝ սպանեց մահը: Այսպես անսուրբ փայտը, որ մահվան գործիք էր, դարձավ փրկության գործիք եւ սրբություն սրբոց, կառավարատեղին դարձավ կենսագործման վայր, իսկ թաղումը՝ փոխարկվեց սքանչելի հարության:

Վկայակոչելով Սուրբ Գիրքը՝ Դավիթ Անհաղթն Աստծու՝ մարդկանց հանդէպ ունեցած սիրո նշան է համարում այն, որ Յայրն Իր Սիածին Որդուն ուղարկեց մեղավոր մարդու փրկության համար: Թեեւ Տերը մարմնապես այլեւս Խաչի վրա չէ, սակայն Նրա գործունեությունը փոխանցվել է Խաչին, եւ Նա հավիտենապես ներկա է Խաչի վրա: Ուստի՝ ով խաչնուրում է Խաչը, հաղորդվում է ոչ լոկ խաչափայտի հետ, այլ դրա վրա խաչված Աստծու ահավոր գործությամբ: Այս իմաստով Եկեղեցին հավատում է ոչ թե ժամանակավոր, այլ հավիտենական Պատարագին եւ Պատարագվածին, Տիրոջ կարգադրությամբ շարունակում է մշտապես կատարել Պատարագի խորհուրդը՝ մինչեւ երկրորդ գալուստը:

Յետեւելով հայրաբանական գրականության մեջ ընդունված Յին եւ Նոր Կտակարանների գլուգադրման սկզբունքին՝ Դավիթ Անհաղթը ցույց է տալիս Խաչի գաղափարական նախորինակները, Աստծու՝ մարդկության փրկագործության ծրագրի տարբեր համագրվածները: Ներբողի սկզբում Խաչը համեմատում է Սիոն լեռան հետ: Որպես փայտ՝ Խաչը երկրի վրա բուսնած սովորական ծառ է, սակայն իր վրա որպես պտուղ կրելով Անտանելին՝ բարձրացավ իսրայելյան ազգի մեջ՝ այդ ծառի պտղով լցվեց ողջ տիեզերքը: Խաչափայտը Կենաց ծառի խորհրդապատկերն է, որի շնորհիվ մարդը կարողացավ մոտենալ եդեմական պարտեզում սերովքների եւ քերովքների իսկած փայտին: Եթե առաջին փայտն իր



գեղեցիկ եւ քաղցր պտղով մահվան պատճառ դարձավ՝ հրապուրելով «ադամածին կույսին», ապա «կուսածին Ադամը», Խաչի վրա դառնաճաշակ լինելով, մարդկանց կյանք պարգեւեց: Այսպիսով՝ Խաչը դարձավ գլորված նախահորը բարձրացնող ցույց եւ զավագան: Խաչը Նոյի իմանալի տապանն է, որն այս կյանքի խեղդող ալիքների միջից իրեն ապավինած հոգիներին դեպի երկինք է բարձրացնում: Խաչը համեմատվում է Սաբեկա ծառի հետ, որի վրա կախված Գառը փրկեց ոչ միայն Իսահակին, այլեւ Ադամի բոլոր սերունդներին: Խաչը խորհրդապատկերն է Յակոբ մահապետի երազում տեսած սանդուղքի, որի վրա հաստատվեց Տերը, եւ դրա համար Յակոբն այն կոչեց Երկնքի դուռ եւ Աստծու տուն՝ Բեթել: Դավիթ Անհաղթը Խաչի նախակար է համարում նաեւ Եգիպտոսում իրեաների հետ կատարված իրադարձությունները, երբ նրանց դռներին վրա զավագանով արնաշաղախ նշան արվեց, եւ դրանով փրկվեցին Իսրայելի ցեղի անդրանիկները: Նույնպես եւ Խաչի վրա Աստծու Որդու արյամբ արված նշանով փրկվեց ողջ մարդկությունը: Շարունակելով իրեաների՝ Եգիպտական գերությունից ազատագրման նկարագրությունը՝ Դավիթ Անհաղթը Խաչը համեմատում է Մովսեսի զավագանի հետ, որի հարվածից ջուրը ժայռի փոխակերպվեց (նկատի ունի Կարմիր ծովով իսրայելացիների անցումը), իսկ հետո անապատում նույն զավագանի շնորհիվ ժայռից ջուր բխեց: Անտանելի Լույսը եւ Յուրն իր վրա կրելով՝ Խաչը լուսավորում է իր հետեւորդներին եւ առաջնորդում դեպի երկնային քաղաք՝ նմանվելով Սիմայի անապատում իսրայելացիներին առաջնորդող «ամպատեսիլ» սյանը, որը ցերեկն իր փառքով ծածկում էր Վկայության խորանը, իսկ գիշերը լուսավորում էր նրանց ու պաշտպանում հալածող թշնամիներից: Սիմա լեռան վրա Մովսեսն ստացավ քարե տախտակների վրա գրված Տասնաբանյա պատվիրանները՝ «մատամբն դրոշմեալ Աստուծոյ»: Իսկ Խաչն իմանալի քարեղեն քառանկյուն տախտակ է, որի վրա, սակայն, նույն ինքը՝ անպարագրելի Աստված բարձրացավ՝ Սիոն լեռան վրայից շնորհելով ճշմարիտ աստվածամաշտոյությունը: Շարունակելով հիմնականաբանյան գլուգադրումները՝ Դավիթ Անհաղթը Խաչն անվանում է Խաչա-կառք՝ քառադեն կառքի օրինակով, իմանալի տապանակ, երկնային մանանյալով լցված ոսկե սափոր, ծաղկով պայծառացած հրաշաբեր զավագան, իմանալի աշտանակ, որ Լույսն իր վրա կրելով՝ լուսավորեց ամբողջ աշխարհը եւ այլն:

Աստվածաշնչային դրվագներից բացի՝ Դավիթ Անհաղթը Խաչը խորհրդաբանորեն համեմատում է կենսական նշանակություն ունեցող տարբեր առարկաների ու երեւոյքների հետ՝ յուրաքանչյուրի համար կիրառելով «իմանալի» բառը: Այսպես՝ խա-

չը իմանալի հնձան է, որի վրա ճնվեց երկնային ողկույզը: Խաչն իմանալի կամուրջ է, որը մարդկանց մահվանից դեպի կյանք անցկացրեց: Այն քարտեզ է, որի վրա մարդու ազատության եւ որդեգրության անջինջ կտակը գրվեց ոչ թե մեղանով եւ ոչ էլ Աստծու մատով ստեղծված տառով, այլ Աստծու Որդու անպատմելի արյամբ: Եվ վերջապես՝ սուրբ փայտն իմանալի զավագան է կենարար Սուրբ Յովվի ձեռքում, որով որոշվում են Եկեղեցու ընտրյալ անարատ զառմերը, որոնք ճակատներին արված նշանով Մեծ դատաստանի օրը գերծ կմնան աստվածային բարկության սրից:

Խաչի օրինության, գրաբանական հատվածը հեղինակն ամփոփում է Խաչի բարոյաբանական նշանակությունը շեշտող արտահայտություններով. «Օրինեալ ես, փայտ սուրբ, անբարբառ բարեխօս, հրեշտակաց ցուցական, սրբութիւն անտեսականին իւրեանց Տեառն փառաց, եկեղեցւոյ փառք, առաքելոց պարծանք, մարգարէից հանդիսարան. մարտիրոսաց պսակ, քահանայից շնորհաբաշխութիւն, վարդապետաց քանոն հաւատոյ: Թագաւորաց յաղթանակ, իշխանաց յոյս քաջութեան, քրիստոսաւեր գորաց յառաջապահեստ ախոյանաց քաջալերութիւն, մահատակաց զօրաւիգն, վտանգելոց օգնական, պարտեցելոց ապաւն....» եւ այլն:

Ներբողը եզրափակվում է Քրիստոսի երկրորդ գալստյան ժամանակ Խաչի կառքերի դերի արժեւորմամբ: Ահեղ դատաստանի օրը Խաչը պետք է առաջնորդի հրեշտակներին՝ ավետելով երկնավոր Թագավորի գալուստը: Այդ անտանելի փառքի լույսը կլինի որպես անհավատների հանդիմանություն, հավատացյալների պարծանք, անսուրբների դատապարտություն եւ բարեգործների գովություն: Այդ ժամանակ հարություն առած սրբերը Փեսայի լուսազգեստ բարեկամների հետ միասին կիրավիրվեն մասնակցելու «հարսանեաց» հանդեսին: Իսկ մոլորվածներն ու Խաչին չերկրպագողները կզրկվեն լույսից եւ հավիտենական հնոցում կհայտնվեն:

Դավիթ Անհաղթն ամփոփում է իր ստեղծագործությունը Պողոս առաքյալի հետեւյալ խոսքով. «Այլ յորժամ հնազանդեսցի նմա ամենայն յայնժամ եւ ինքն Որդի հնազանդեսցի այնմ, որ հնազանդեցոյց նմա զամենայն. զի եղիցի Աստուած ամենայն յամենայնի» (Ա Կորնթ. Ժե 28): Պորը եւ մարդեղացած Որդուն հնազանդվելու առաքելական հորդորին նա հավելում է Խաչին հնազանդվելը. «Եվ երբ յորժամ զհնազանդելն համագոյակցին առ ամենահայրն հասցէ իմանալ Որդոյ մարդկութեանն մինչ ի քեզ (իմա՛ Խաչին.— Ա. Մ.) հնազանդեցելոյ որոյ յետին առ ծայրագոյն անճառիցն ընկաւցի իմացուած»:

Շարունակելի

Արմինե ՄԵԼՈՆՅԱՆ  
Պատմական գիտ. թեկնածու



Ս. Ներսես Շնորհալիմ ծնվել է մոտ 1100 թվականին (այս առնչությամբ տարբեր տեսակետներ կան) Կիլիկիայի Ծովք ամրոցում: Հայ Եկեղեցին հովվապետել է 1166–1173 թթ.: Որպես հասարակական գործիչ եւ մտավորական՝ Ս. Ներսես Շնորհալիմ մեծ ազանդ ունի Կիլիկիայի հայկական իշխանության, պետականության կայացման գործում: Մինչեւ Հայոց Կաթողիկոս դառնալը՝ նա եղել է իր եղբոր՝ Գրիգոր Գ Պապիկյանի (1113–1166 թթ.) ուղեկիցն ու խորհրդատուն: Թողել է մատենագրական հարուստ ժառանգություն՝ արձակ (մեկնություններ, նամակներ, ճառեր) եւ չափածո (շարականներ, գանձեր, ներբողներ, աղոթքներ, հանելուկներ, ուղերձներ, պոեմներ եւ այլն):

Ս. Ներսես Շնորհալու կրոնական-դավանաբական բնույթ ունեցող չափածո ստեղծագործությունները նախատեսված են ոչ միայն հոգեւորականների, այլ նաեւ ընթերցողների լայն զանգվածի համար: Նման ստեղծագործություններով հեղինակը լուծել է գաղափարական բազմաթիվ խնդիրներ, նպատակ է ունեցել կրթել ու դաստիարակել հասարակությանը: Դավանաբանական բնույթ ունեցող չափածո ստեղծագործությունների մեջ ծավալով ամենամեծը «Յիսուս Որդի» պոեմն է: Մինչ սույն ստեղծագործությանն անդրադառնալը՝ խոսենք «Բան հաւատոյ» պոեմի մասին: «Բան հաւատոյ» ստեղծագործությունը Ս. Ներսես Շնորհալին գրել է 1151 թ.: Գրիգոր Ապիրատի խնդրանքով: 1500 տողից բաղկացած պոեմը կազմված է երեք մասից: Առաջին մասում ներկայացվում է Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու վարդապետությունը, եւ քննադատվում է հույների առաջադրած Քրիստոսի երկաբնակության դավանաբանությունը: Երկրորդ մասը Հոգիանմանի Ավետարանի վերապատումն է: Երրորդ մասում նկարագրվում է վերջին դատաստանը: Ուսումնասիրողների մեծ մասը նշում է, որ այս պոեմը գրվել է գլխավորապես ուսուցողական նպատակով եւ գեղարվեստական արժեքի առումով համեմատաբար թույլ գործ է: Ս. Աբեղյանն այս ստեղծագործությունը համարում է «մեսիական» հորինելու առաջին փորձ եւ նշում, որ այն հեղինակին հավանաբար չի բավարարել (Ս. Աբեղյան, Երկեր, հտ. Դ, Երեւան, 2015, էջ 119), ուստի մեկ տարի անց՝ 1152 թվականին, Ս. Ներսես Շնորհալին գրել է «Յիսուս Որդի» պոեմը: Այսպես՝ «Բան հաւատոյ»-ն դիտվել է իբրեւ «Յիսուս Որդի» պոեմի նախնական տարբերակ:

«Յիսուս Որդի» պոեմի ամբողջական վերնագիրն է՝ «Տեառն Ներսէսի մուր մաղթանաց ներշնչական տաղիւ տուողին բանից ըղծումն աղօթից ներանձնական հոգւոց զարթուցելոց մտօք ի թմբուրեմն կրից յիշատակաւ անցելումն իրի, ներկայի եւ ապագայի, ողբումն հեծութեան արտի խօսք ընդ Աստուծոյ»: Պոեմը բաղկացած է 4000 տողից, բովանդակվում է Հին եւ Նոր Կտակարանների պատմությունը, բաժանված է երեք գրքի, որոնք խորհրդանշում են մարդկության անցյալը, ներկան ու ապագան: Ձեւի ու թեմայի առումով նկատելի է Գրիգոր Մագիստրոսի «Հազարտողեան»-ի ազդեցությունը: Ս. Ներսես Շնորհալին, Գրիգոր Մագիստրոսի օրինակով, նյութը վերցրել է Աստվածաշնչից, վերածել չափածոյի եւ գրել *-իմ* հանգով: Իսկ բովանդակային առումով, ինչպես երեւում է վերնագրից, առկա է Ս. Գրիգոր Նարեկացու «Մատեան....»-ի ազդեցությունը: Ինչպես «Մատեան ողբերգութեան», այնպես եւ «Յիսուս Որդի» պոեմի առանցքը խոսքն է «ընդ Աստուծոյ»: Անդրադառնալով Ս. Գրիգոր Նարեկացու «Մատեան....»-ի ազդեցությանը՝ Վ. Սաֆարյանը գրում է, որ «Յիսուս Որդի» պոեմը «նախանշում է Նարեկի ազդեցությունը, եւ հենց Կիլիկյան գրականության մեջ է, որ Ներսես Շնորհալիով, Գրիգոր Մարաշեցիով, Գրիգոր Տղայով մեկդարյա լուծումնից հետո վերջապես հիմնավորվում է Նարեկի եւ Նարեկացու «դպրոցը» (Վ. Սաֆարյան, Հայ միջնադարյան գրականություն, Երեւան, 2016, էջ 227): Սակայն «Մատեան ողբերգութեան» եւ «Յիսուս Որդի» պոեմները որքան նման, այնքան էլ տարբեր ստեղծագործություններ են: Այդ տարբերությունը հրաշալիորեն բնութագրել է Ս. Աբեղյանը. «Ներսես Շնորհալու այս



## Ս. Ներսես Շնորհալու «Յիսուս Որդի» պոեմի ուսուցողական բնույթը



բանաստեղծության մեջ ողբերգը մեղմ է, տխուր ու քնքուշ, ամենայն ինչ հանդարտ է ու փափուկ: Ո՛չ վերաբարձ սլացք ու թռիչք, ո՛չ արտի այրուք ու ճեմծերում եւ ո՛չ տոչորող ու կրակոտ զղջում: Այստեղ չենք գտնում հուսահատական ճիչ ու աղաղակ, որով ինքն իրեն կտրատում եւ ոչնչացնում է Գրիգոր Նարեկացին ողբալիս: Ներսես Շնորհալու.... զգացումների զեղումն անկեղծ է, մեծ է կրոնական զղջման եռանդը, բայց, ինչպես սովորաբար, նա չափավորությամբ սահմանից չի անցնում: Երկուսի մեջ եւս կատարելապես մույն զգացումներն են՝ միայն արտահայտության թափով ու ձեւով տարբեր: Բայց Շնորհալին նման է մի բարեկիրք մարդու, որ իրեն պահել գիտե, մինչդեռ Նարեկացին հիշեցնում է մի բնական մարդ[ու], որի ներքինն անզուսպ է, եւ որ անմիջականորեն, առանց քաշվելու արտահայտում է իր բռնկումները եւ հեկեկալով արտասվում: Նա համեմատվում է պղտոր հեղեղի [հետ], որ գրդանք տալով՝ ալիք-ալիք [ի]նտեկից քշում է առաջ, եւ որի մեջն ընկնողը տանջալից տարվում է երկար-երկար՝ առանց հասնելու եզրին. մինչդեռ Շնորհալին նման է մի ականակիտ, վճիտ աղբերակի, որ հանդարտ սահում է

կարկաչելով, որի խաղաղ ափին մատած՝ մարդ սուզվում է խորհրդածության մեջ աշխարհիս մասին» (Ս. Աբեղյան, Երկեր, հտ. Դ, էջ 124–125): Սա պայմանավորված էր ոչ միայն երկու բանաստեղծների խառնվածքի, այլ նաեւ գրության ժամանակի տարբերություններով. փոխվել էր «կրոնավորության ոգին»: Ս. Ներսես Շնորհալու ժամանակ այնքան արդիական չէին Ս. Գրիգոր Նարեկացու դարին բնորոշ ինքնախարզանումներն ու ձգնակեցությունը:

«Յիսուս Որդի»-ն «Մատեան....»-ից տարբերվում է մեկ այլ կարեւոր յուրահատկությամբ եւս. Ս. Գրիգոր Նարեկացու «Մատեան....»-ը բացառապես քնարական ստեղծագործություն է, մինչդեռ «Յիսուս Որդի»-ն բնույթով վիպաքնարական (քնարապատմողական) պոեմ է՝ իբրեւ այդպիսին առաջինը հայ գրականության մեջ. «Ինչպես երկի խորագիրը եւս հուշում է («Ողբերգութիւն վիպասանական»), այստեղ գրեթե հավասարապես հանդես են գալիս եւ քնարական, եւ վիպական տարրերը» (Հայ միջնադարյան գրականության ժանրեր, Երեւան, 1984, էջ 278–279): Ըստ Ս. Աբեղյանի՝ «....դա լոկ վիպական աշխատություն չէ, այլ միաժամանակ եւ քնարական քերթված է կամ, ինչպես հեղինակը բնորոշել է, «ողբերգութիւն վիպասանական». մի կողմով պատված է, մյուս կողմով՝ մի սրտաբուխ երգ» (Ս. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 124):

Պոեմի ուսուցողական, դաստիարակչական բնույթը ցույց տալու համար կարելու է նրա գրության ժամանակի ու շարժառիթների քննությունը: Վերածնունդը շարունակվում էր. մարդիկ հետաքրքրվում եւ հաճախ քննադատորեն էին մոտենում կրոնական հարցերին: Եկեղեցու քարոզած ճշմարտությունները կասկածի, հարցականի տակ էին դրվում: Շարունակում էին գործել աղանդավորական խմբերը, որոնք խարխուլում էին Եկեղեցու հիմքերը: Իր նամակներից մեկում Ս. Ներսես Շնորհալին խոսում է արեւորդիների աղանդի մասին, որը գործում էր Սամոսատ քաղաքում, եւ որի արմատները կապվում էին արեւապաշտների հետ. «Արեւորդիները.... մնալով սատանայական խավարի մեջ, չկամեցան Լուսավորիչ սուրբ Գրիգորի միջոցով լուսավորվել աստվածային լույսով, այլ խավարը սիրեցին եւ ո՛չ լույսը մինչեւ այսօրվա ժամանակները» (Նամակների, ԺԲ դար, Հայ-բյուզանդական եկեղեցական բանակցություններ, Ս. Ներսես Շնորհալի, Ս. Էջմիածին, 2011, էջ 199): Հոգեւոր հիմքերի թուլացման գործում որոշիչ նշանակություն ուներ նաեւ քաղաքական դրությունը: Կիլի-

կիան շարունակ ենթարկվում էր սելջուկների հարձակումներին: Բյուզանդացիներին հաջողվել էր ժամանակավորապես (1137–1145 թթ.) վերացնել հայոց իշխանությունը: Բացի այդ՝ Բյուզանդիան հետեւողականորեն շարունակում էր աշխատել Հայ-Հունական եկեղեցիների միությանը հասնելու ուղղությամբ: Սուրբ Երրորդության ընկալման հարցը դարեր շարունակ վեճերի առարկա էր եղել: «Նիկիայի (325 թ.), Կ. Պոլսի առաջին (381 թ.) եւ Եփեսոսի (431 թ.) տիեզերական ժողովներում ընդունվում եւ սրբագրվում են հավատո հանգանակները, որ հենվում են Մատթեոսի Ավետարանում Սուրբ Երրորդության խորհրդի անձերի սեղմ բանաձեւման վրա՝ «Յանուն Հայր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ» (Մատթ. ԻԸ 20) (Հ. Որսկանյան, Ներսես Շնորհալու պոեմները, Երեւան, 2006, էջ 92): Սակայն Քաղկեդոնի ժողովում հաստատվում է՝ Քրիստոս ունի երկու բնություն՝ աստվածային եւ մարդկային, որոնք իրար հետ անշփոթելի են: Ե դարում Հայ Եկեղեցին չկարողացավ մասնակցել Քաղկեդոնի ժողովին՝ քաղաքական ծանր կացության պատճառով, բայց արդեն 506 թվականի Դվինի ժողովում մերժեց Քաղկեդոնի եկեղեցաժողովի որոշումները: Այս որոշմամբ Հայ Եկեղեցին ոչ միայն մեկ անգամ եւս հաստատում եւ ամրագրում էր իր վարդապետությունն ու դավանաբանական սկզբունքները, այլ նաեւ լուծում էր ազգային ինքնությունը պահելու, չճուլվելու խնդիր: Նույն էր իրավիճակը նաեւ Ս. Ներսես Շնորհալու օրերին: Քաղաքական մեծ պայմաններում, երբ վտանգված էր ազգի գոյությունն առհասարակ, խիստ կարեւոր էր Հայոց Եկեղեցու դերը. դավանաբանական երկերն ու գրվածքները նպատակ ունեին հանգամանորեն ներկայացնելու Հայոց Եկեղեցու վարդապետությունը եւ յուրատեսակ միջոց էին ազգային դիմագիծն ու ինքնությունը պահպանելու համար: Հավատը զորացնելու համար նախ անհրաժեշտ էր, որ այս երկերը, գրվածքները, ճառերն ու քարոզներն ընկալելի եւ սիրելի լինեին ժողովրդի համար: Ահա այս գործոններն էին Ս. Ներսես Շնորհալուն մղում իր գրեթե բոլոր ստեղծագործություններում հետեւողականորեն ու մանրամասն ներկայացնելու Սուրբ Երրորդության վարդապետությունը եւ քրիստոսաբանական որոշ հարցեր: Նշանավոր հայրը փորձում էր դա անել հնարավորին չափ մատչելի ու ժողովրդին հասկանալի տարբերակով: Այս տեսանկյունից Ս. Ներսես Շնորհալու մտքի բարձրակետը դառնում է «Յիսուս Որդի» պոեմը:

«Յիսուս Որդի» ստեղծագործությունը որոշակիորեն ունի նաեւ ուսումնական բնույթ: Ս. Ավդալբեգյանը նշում է, որ «Յիսուս Որդի»-ն կերտված է մանկավարժական չափանիշներով, եւ այն «կանոնական գրքերի հենքի վրա հյուսված ստեղծագործություն է, որ նպատակ ունի ամրապնդել Հին եւ Նոր Կտակարանների էական դրվագներն ընթերցողի մեջ, հստակել այլաբանություններն ու տպավորել մատչելի մեկնություններով» (Ներսես Շնորհալի, Հոգվածների ժողովածու, Երեւան, 1977, էջ 53): Ա. Մաղոյանը եւս «Յիսուս Որդի» ստեղծագործությունը համարում է ուսուցողական պոեմ՝ նշելով, որ Ս. Ներսես Շնորհալու գլխավոր նպատակը Աստվածաշնչի բազմաթիվ կարեւորագույն դրվագների ուսուցումն է եղել (Հայ միջնադարյան գրականության ժանրեր, էջ 277): Պոեմի ուսուցողական բնույթի մասին է վկայում նաեւ այն, որ «Յիսուս Որդի»-ն ունեցել է երգվող հատկանշներ: Միջնադարյան մի շարք գրչագրերում «Յիսուս Որդի» պոեմի օրինակը բերվել է որեւէ անխազ կամ խազավոր երգի չափն ու ձայնեղանակը հուշելու նպատակով (օրինակ՝ «Թե չես կարեր խազերով, նա Յիսուս Որդի ձայն ասա»): «Այս բոլորը պարզ ցույց են տալիս, որ «Յիսուս Որդի»-ն ժամանակին եղանակավոր (ասե՛րք ձեւով) պատմվել ու հատվածաբար նաեւ երգվել է.... ըստ որում, հիմնական բոլոր ձայնեղանակների ընդգրկմամբ» (Ն. Թահմիզյան, Ներսես Շնորհալին երգահան եւ երաժիշտ, Երեւան, 1973, էջ 32):


Շարունակելի

# Հայ եկեղեցին եւ արեւելահայ դպրոցը ԺԹ դարի երկրորդ կեսին

Հայ ժողովրդի կյանքում իրենց ուրույն եւ անփոխարինելի տեղն են ունեցել եկեղեցին, դպրոցը ու մշակույթը: Պատմության ընթացքում, քաղաքական-հասարակական, տնտեսական, ազգային տարբեր դրդապատճառներով պայմանավորված, ժամանակ առ ժամանակ արգելվել է հայկական դպրոցների գործունեությունը: ԺԹ դարի երկրորդ կեսին Արեւելյան Հայաստանը ենթարկվում էր Ցարական Ռուսաստանի տիրապետությանը: Այս շրջանում հայկական դպրոցները ցարական իշխանության կողմից դիտվում էին որպես հակապետական եւ կազմաքանդող կառույցներ, ուստի փակվում էին բազմաթիվ դպրոցներ, արգելվում էր հայերենի եւ Հայոց պատմության դասավանդումը: Նման պայմաններում դպրոցը միայնակ գործել էր կարող, հետեւաբար Հայ եկեղեցին ստանձնեց դպրոցների պաշտպանության եւ կրթական գործընթացը կազմակերպելու ողջ պատասխանատվությունը: արդյունքում հայ դպրոցն ապրեց եւ արդեն իսկ ԺԹ դարավերջին եւ Ի դարասկզբին տվեց իր պտուղները:

Նոր ժամանակաշրջանն սկսվեց Անդրկովկասը Ցարական կայսրությանը միացնելու մի շարք իրադարձություններով. առաջին երկու տասնամյակները կարելու էին հայ մշակույթի բազմադարյա պատմության ընթացքում: Նախկինում բուրժուական հարաբերությունները հայ իրականության մեջ տեսանելի դրսևորումներ էին արձանագրում, իսկ ԺԹ դարի կեսե-

րից այդ հարաբերությունները թափանցում են Հայաստան ու նպաստում մշակույթի զարգացմանը: ԺԹ դարը դարձավ արեւելահայ դպրոցի եւ կրթական համակարգի, այդ թվում՝ հոգեւոր դպրոցի զարգացման կարեւոր փուլերից մեկը: Թեեւ Ցարական Ռուսաստանը Արեւելյան Հայաստանում իրականացնում էր զաղութային քաղաքականություն, այդուհանդերձ՝ տնտեսական եւ քաղաքական առումով առավել զարգացած տերություն էր, քան շահական Պարսկաստանն ու Օսմանյան Թուրքիան: Միանալով առաջավոր պետությանը՝ հայ ժողովուրդը հնարավորություն ստացավ համեմատաբար բարենպաստ պայմաններում առաջադիմելու եւ զարկ տալու մշակույթի զարգացմանը: 1836 թ. «Պոլս-ժեմիեն» սահմանափակում էր Հայ եկեղեցու իրավունքներն ու պարտականությունները: Հայ եկեղեցին, չնայած ծավալված հալածանքներին, ամեն կերպ փորձում էր իրականացնել իր հոգեւոր ծառայությունը, կյանքի կոչել հայ մանուկների կրթության



եւ դաստիարակության իր տեսլականը:

1860-ական թվականներին հասարակական-քաղաքական կյանքը վերելք էր ապրում, ինչն էլ իր հերթին աշխուժություն էր առաջացրել Ռուսական կայսրության կրթալուսավորական ոլորտում: Ս. Մխիթարյանն այս ժամանակաշրջանի լուսավորական շարժման վերաբերյալ գրում է. «Քաղաքներում եւ գյուղերում բազմաճյուղ են հայ դպրոցները, ավելանում է եվրոպայում եւ ռուսական համալսարաններում կրթություն ստացած մանկավարժների թիվը...» (Ս. Մխիթարյան, XIX դարի երկրորդ կեսի արեւելահայ պարբերական մամուլի պատմությունից, Երևան, 1976, էջ 193): Արդյունքում առավել գործունե է դառնում հասարակական նախաձեռնությունը նոր

դպրոցների ստեղծման եւ գրքերի հրատարակման ուղղությամբ. «Դպրոցաց ու տպարաններու յաճախութեամբն եւ յառաջադիմութեամբ՝ մատենագրական ախորժակն ալ սովորականէ անելի բարգաւաճանք մը սկսաւ երեւցնել: Նախնեաց ընտիր երկասիրութիւններու բազմաթիւ հատորներ հրատարակուեցան, ազգային քերթուածներ... մեր պատմութիւնը, մատենագրութիւնը եւ աշխարհագրութիւնը՝ հմուտ գրուածքներով քննադատուեցան ու զարգացան» (Գ. Չարսխանյան, Պատմութիւն հայերէն դպրութեան ի պէտս ազգային վարժարանաց, Վենետիկ, 1905, էջ 411—412): Իսկ Լեոն իրավամբ նկատում է. «Ստաւոր վերածնութեան համար երկու մեծ գործօններ կային հայութեան առաջ՝ դպրոց եւ տպարան» (Լեո, Պատմութիւն Երեւանի հայոց թեմական հոգեւոր դպրոցի (1837—1912), Թիֆլիս, 1914, էջ 91): Երեւանում հիմնադրվեցին հասարակական մի շարք կազմակերպություններ, որոնց նպատակն էր ուղղակի եւ անուղղակի միջոցներով նպաստել կրթական գործի կազմակերպմանը: Դարի 60-ական թվականների սկզբին գործադրված մի շարք քայլերի շնորհիվ հաջողվում էր բարելավել վարժարանների վիճակը: Ռուսական կայսրությունն այլեւս անկարող էր դիմադրել եւ որոշել էր «առաջնորդել» սկսված շարժումը: Կարելի է ենթադրել, որ նման քաղաքականությամբ ցարական կառավարությունը փորձում էր վերահսկել եւ ուղղորդել լուսավորական շարժումը: ➔ էջ 8

## Կինեմատոգրաֆը Հայ եկեղեցում

1895 թվականին Լուի Ժան Լյումիերը Ֆրանսիայում ստեղծեց առաջին տեսախցիկը՝ կինեմատոգրաֆը: Համաշխարհային այս գյուտից 15 տարի անց՝ 1910 թվականին, այն առաջին անգամ մուտք գործեց նաեւ Հայաստան՝ բացելով ոչ միայն հայ կինոյի պատմության առաջին էջը, այլ նաեւ հիշարժան դառնալով Հայ եկեղեցու համար:

Հայաստանում առաջին նկարահանումներն առնչվում են Հայ եկեղեցուն: Դրանք կատարվել են Մայր Աթոռ Ս. Էջմիածնում՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Մատթեոս Բ Իգնիլյանի (1908—1910 թթ.) հուղարկվածության առիթով: Մոտ կես րոպե տևողությամբ վավերագիր այդ դրվագները պատկերում են, թե ինչպես է եկեղեցական թափոքը կաթողիկոսի դագաղը դուրս հանում վեհարանից:

Եվ քանի որ հայտնի է արարողության ճշգրիտ ժամանակը՝ 1910 թվականի դեկտեմբերի 18, կարող ենք փաստել, որ նկարահանումներն էլ կատարվել են ճիշտ այդ օրը:

Ինչպես վկայում է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պաշտոնական ամսագիր «Արարատ»-ը, դեկտեմբերի 18-ին հյուրերի եւ խումբ ժողովրդի ներկայությամբ «...կատարուեց տան կարգը, որից յետոյ հայրապետի մարմինը դազաղով, որ բարձել էին եպիսկոպոսներն ու վարդապետները, դուրս հանուեց վեհարանից. առաջին հանգիստը կատարուեց վեհարանի ներքին բակում» («Արարատ», 1910, դեկտեմբեր):

Կինոժամանակագրության հեղինակն օպերատոր Դիգմելեն է: Ժամանակին նա ֆրանսիական հանրախայտ «Պատեն» (Pathé) կինոընկերության ռուսական մասնաճյուղի ներկայացուցիչն էր: Եվ հանրահռչակ այս ընկերության նշանն է կրում «Էջմիածին. Ամենայն Հայոց Կաթողիկոս Մատթեոս Բ-ի հուղարկավորություն» անվանված վավերագիր տեսանյութը՝ 1911 թվագրությամբ:



Արժե հիշատակել նաեւ, որ հայ կինեմատոգրաֆի եւ Հայ եկեղեցու համար պատմական այդ ժապավանները պատահաբար հայտնաբերել է վավերագրող Սամվել Մաթոսյանը՝ մերձմուսկովյան Կրասնոգորսկ քաղաքի արխիվում:

Հայտնի չէ, թե ում նախաձեռնությամբ կամ հրավերով են Մայր Աթոռում կատարվել առաջին այդ նկարահանումները: Սակայն հետագա տարիներին Հայ եկեղեցին անմասն չի մնացել հայ կինեմատոգրաֆի զարգացումից՝ հակառակ այն իրողության, որ խորհրդային եկեղեցափառ շրջանում Մայր Աթոռ Ս. Էջմիածինն ու հոգեւոր դասը այլեւս դուրս էին տեսախցիկի ոսպնյակից:

Հայտնի է, որ 1935 թվականին նկարահանված հայկական հնչյունային առաջին ֆիլմում՝ «Պեպո»-ում, երգերի կատարումը վստահվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի քահանաներից տեր Նիկոլին:

Տիրայր արք. Մարտիրոսյանն իր հուշերում գրում է. «Պեպո» ֆիլմի երգողը ինքն էր: Դժբախտաբար այդ ֆիլմը այրվեցավ, հետո տեր Նիկոլին փոխարինեց խորեն Պալյանը» (Տիրայր արք. Մարտիրոսյան, Կյանք մը խաչի նշանին տակ, Երևան, 2007, էջ 28):

Հիշարժան է նաեւ, որ 1943 թվականին նկարահանված «Դավիթ Բեկ» ֆիլմում հնչող եկեղեցական մեղեդիների ընտրությունը կատարել է Հայոց հայրապետ, այն ժամանակ՝ կաթողիկոսական ազգընտիր տեղապահ Գեորգ արք. Չորեքչյանը՝ կինոստուդիայի տնօրենի խնդրանքով:


«Պատրաստում է նոր կինո Դավիթ Բեկ, որի համար կարելու են եկեղեցական եղանակներ: Կինո-ստուդիայի դիրեկտորը դիմեց ինձ եւ խնդրեց օժանդակել իրենց տալու համապատասխան պատրաստի մշակումը միւթ: Ցանկանալով այս հասարակական բնույթ կրող գործին օգտակար լինել՝ համաձայնեցի եւ տուի չորս մշակում եղանակներ, որք են՝ Նորահրաշ, Էջմիածին, Բաց մեզ, Անկանխք»,— գրում է Գեորգ արք. Չորեքչյանը ժողովուսովետին կից Հայ եկեղեցու խորհրդի նախագահին ուղղված 1943 թվականի իր մամակում՝ ֆիլմի հեղինակներին առաջարկված շարականները եկեղեցական ծախսով տպագրված տեսնելու խնդրանքով («Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության», գիրք 2, Երևան, 1999, էջ 203):

Խորհրդային տարիներին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում կինեմատոգրաֆի եզակի ներկայությունն ենք տեսնում նաեւ 1945 եւ 1955 թվականներին՝ Ազգային-եկեղեցական ժողովների աշխատանքները լուսաբանելու առիթով:

Այսպես՝ 1945-ին, խորհրդային իշխանությունների որոշմամբ, Սփյուռքի համար հատուկ նկարահանվում է կաթողիկոսական ընտրությամբ նվիրված վավերագրական մի ֆիլմ: Ֆիլմի փակ ցուցադրությամբ հրավիրված նորընտիր կաթողիկոս Գեորգ 2 Չորեքչյանին (1945—1954 թթ.) մտահոգում է հայ կինոյի տեխնիկական վիճակը, եւ կինեմատոգրաֆն անհրաժեշտ սարքերով ապահովելու համար հայրապետը նամակով դիմում է ամերիկահայ թեմի առաջնորդ Տիրան եպս. Ներսիսյանին:

«Առաջին անգամն է, որ Ազգային-եկեղեցական ժողովը՝ իր բոլոր մոմենտներով՝ հայ կինոյի նյութ է դարձել, եւ կինոն արդեն գործում է արտասահմանում: Ամիսներ առաջ Երեւանում կինոյի յատուկ երեկոյթ էին կազմակերպել սահմանափակ թույլ անձանց համար, որոնց թույլ նաեւ ինձ էին հրավիրել: Այստեղ եւս տեսայ հայ կինոյի յետամնացութիւնը՝ համեմատելով Միութեան միւս հանրապետութիւնների հետ եւ խորհեցի ցաւին դարձն տալ:

Կինոն ժողովրդի կուլտուրական զարգացման գործօններից մեկն է: Հայերս պարծենում ենք միշտ մեր կուլտուրականութեամբ, ապա ուրեմն պարտականութիւն ունինք նաեւ այդ ուղղութեամբ մեր



թերութիւններն ուղղելու, մեր պակասը լրացնելու: Տեխնիկան եւ հարստութիւնը այսօր կեդրոնացած է Ամերիկայի մէջ. բնականաբար ուրեմն հայ կինոյի կատարելագործման պարտականութիւնը ծանրանում է ամերիկահայութեան վերայ. եւ Մենք վստահ ենք, թէ ամերիկահայութեան մէջ կգտնուին այդ գործին սիրով ընդառաջողներ»,— Տիրան եպիսկոպոսին հայ կինոյի վերաբերյալ իր մտահոգություններն է հայտնում Ամենայն Հայոց Կաթողիկոսը («Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության», գիրք 2, Երևան, 1999, էջ 321):

Նամակի հետագա ընթացքի մանրամասները հայտնի չեն, թեեւ հավատում ենք նաեւ ամերիկահայության դրական արձագանքին:

Հայ կինոյի այդ ժամանակներից մեզ երկար տարիներ են բաժանում: Իսկ այսօր արդեն կարող ենք արձանագրել՝ մեր օրերում եկեղեցական թեման այլեւս փակ չէ կինոյի համար: Տեսախցիկը ներկա է եկեղեցական ամենատարբեր արարողությունների ու միջոցառումների ժամանակ, ստեղծվում են Հայ եկեղեցու պատմությանը նվիրված փաստավավերագրական բազմաթիվ ֆիլմեր:



# ԴԻՄԻՏՐԻ ԼԻՍԱՋՈՎ ՆԱՄԱԿՆԵՐ ԲԱՐՈՒ ՄԱՍԻՆ

Սկիզբը՝ թիվ 19–22

## Նամակ տասներեքերորդ ԴԱՍԻԱՐԱԿԱԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Լավ դաստիարակություն կարելի է ստանալ ոչ միայն սեփական ընտանիքում կամ դպրոցում, այլ նաեւ... կարող ես ինքդ քեզ դաստիարակել:

Պետք է միայն գիտենալ, թե ինչ է իսկական դաստիարակվածությունը:

Ես համձն չեմ առնում դաստիարակվածության «բաղադրատոմսեր» տալ, քանի որ ինձ ամենեւին օրինակելի դաստիարակված չեմ համարում: Բայց ցանկանում եմ որոշ մտքեր փոխանցել ընթերցողներին:

Համոզված եմ, օրինակ, որ իսկական դաստիարակվածությունն ամենից առաջ դրսևորվում է սեփական տանը՝ սեփական ընտանիքում, հարազատների հետ հարաբերություններում:

Եթե տղամարդը փողոցում թույլ է տալիս անծանոթ կնոջն իրենից առաջ անցնել (անգամ ավտոբուսում) եւ նույնիսկ նրա համար բացում է դուռը, իսկ տանը չի օգնում հոգնած կնոջը լվանալ ամանները, նա դաստիարակված մարդ չէ:

Եթե ծանոթների հետ քաղաքավարի է, իսկ տնեցիների վրա բարկանում է ամեն մի առիթով, նա դաստիարակված մարդ չէ:

Եթե հաշվի չի առնում իր մերձավորների բնավորությունը, հոգեբանությունը, սովորություններն ու ցանկությունները, նա դաստիարակված մարդ չէ:

Եթե արդեն հասուն տարիքում որպես սովորական երեւոյթ է ընդունում ծնողների օգնությունը եւ չի նկատում, որ հենց նրանք արդեն օգնության կարիք ունեն, նա դաստիարակված մարդ չէ:

Եթե բարձրաձայն միացնում է ձայնասփյուռն ու հեռուստացույցը կամ պարզապես բարձր է խոսում, երբ ինչ-որ մեկը տանը դասերն է պատրաստում կամ ընթերցում է (նույնիսկ եթե իր փոքրիկ երեխաներն են), նա դաստիարակված մարդ չէ ու երբեք դաստիարակված չի դարձնի իր զավակներին:

Եթե սիրում է ծաղրել (կատակել) կնոջը կամ երեխաներին՝ չխնայելով նրանց ինքնասիրությունը՝ հատկապես օտարների ներկայությամբ, ապա այս դեպքում արդեն նա (ներեցնք) պարզապես հիմար է:

Դաստիարակվածն այն մարդն է, որը ցանկանում է եւ կարողանում է հաշվի առնել ուրիշներին, նա է, ում համար սեփական քաղաքավարությունը ոչ միայն բնական ու դյուրին է, այլ նաեւ հաճելի: Նա է, ով հավասարապես քաղաքավարի է թե՛ հասուն, թե՛ երիտասարդ տարիքում եւ թե՛ դիրքի բերումով:

Դաստիարակված մարդը բոլոր առումներով իրեն «բարձրաձայն» չի պահում, խնայում է ուրիշների ժամանակը (ըստ ասացվածքի՝ «ճշտապահությունն արքաների քաղաքավարությունն է»), խստորեն կատարում է ուրիշներին տված խոստումները, չի մեծամտում, «քիթը վեր չի ցցում» եւ միշտ նույնն է՝ լինի տանը, դպրոցում, ինստիտուտում, աշխատավայրում, խանութում եւ ավտոբուսում:

Ընթերցողը հավանաբար նկատել է, որ հիմնականում դիմում եմ տղամարդուն՝ ընտանիքի գլխավորին. այն պատճառով, որ կնոջը, իսկապես, պետք է զիջել ճանապարհը... ոչ միայն դռան առջև:

Բայց խելամիտ կինը հեշտությամբ կհասկանա՝ հատկապես ինչ է պետք անել, որ մշտապես եւ երախտագիտությամբ տղամարդու ընդունելով բնությունից իրեն տրված իրավունքը՝ որքան հմարավոր է քիչ ստիպի նրան՝ իրեն զիջել առաջնությունը: Իսկ դա անհամեմատ դժվար է: Ահա թե ինչու բնությունը հոգացել է, որ կանայք ընդհանուր առմամբ (չեմ խոսում բացառությունների մասին) օժտված լինեն նրբակատության առավել մեծ զգացումով եւ բնական բարեկրթությամբ, քան տղամարդիկ...



Բազմաթիվ գրքեր կան «լավ վարվելակերպի» մասին: Այս գրքերը բացատրում են, թե ինչպես քեզ պահել հասարակության մեջ, հյուրընկալվելիս ու տանը, թատրոնում, աշխատավայրում, ավագների եւ կրտսերների հետ, ինչպես խոսել ու հագնվել՝ չվիրավորելով շրջապատողների լսողությունն ու տեսողությունը: Սակայն մարդիկ, ցավոք, քիչ բան են քաղում այս գրքերից: Դա տեղի է ունենում, կարծում եմ, այն պատճառով, որ գրքերում հազվադեպ են բացատրում լավ վարվելակերպը. ինչ-որ է անհրաժեշտ լավ վարվեցողությունը: Թվում է՝ լավ վարվելակերպ ունենալը կեղծ, ձանձրալի եւ ավելորդ է: Լավ վարվելակերպով մարդը, իսկապես, կարող է քողարկել վատ արարքները:

Այո, լավ վարվելակերպը կարող է խիստ արտաքին լինել, բայց ընդհանուր առմամբ լավ վարվեցողության կանոններն ստեղծվել են բազմաթիվ սերունդների փորձառությամբ եւ խորհրդանշում են մարդկանց դարավոր ձգտումը՝ լինել առավել լավ, ապրել ավելի հարմարավետ ու գեղեցիկ:

Ո՞րն է բանը: Ինչն է ընկած լավ վարվելակերպ ձեռք բերելու ուղեցույցի հիմքում: Արդյո՞ք այն հասարակ կանոնների ժողովածու է, վարվելակերպի «բաղադրատոմսեր», հրահանգներ, որոնք դժվար է բոլորը հիշել:

Լավ վարվեցողության հիմքում ընկած է մտահոգությունը՝ մտահոգություն, որ մարդը չխանգարի մարդուն, որպեսզի բոլորը միասին իրենց լավ զգան:

Հարկավոր է կարողանալ միմյանց չխանգարել: Ուստի պետք չէ աղմկել: Աղմուկից չես փակի ականջները. հազիվ թե դա բոլոր դեպքերում հնարավոր լինի: Օրինակ՝ սեղանի շուրջ՝ ճաշի ժամանակ: Հետեւաբար՝ չպետք է ճաճալցնել, պատռաքաղը զրնգոցով դնել ափսեի մեջ, աղմուկով կլանել ապուրը, ընթրիքի ժամանակ բարձր խոսել կամ խոսել լիքը բերանով՝ սեղանակիցներին անհամապատասխան չպատճառելու համար: Եվ պետք չէ արմունկները սեղանին դնել՝ եւ դարձյալ սեղանակիցներին չխանգարելու համար: Անհրաժեշտ է կոկիկ հագնված լինել, որովհետեւ այդպես հարգանք է դրսևորվում մյուսների՝ հյուրերի, տանտերերի կամ պարզապես անցորդների նկատմամբ. ձեզ նայելը տհաճ չպետք է լինի: Հարկավոր չէ հոգնեցնել հարեաններին անդադար կատակներով, սրամտություններով ու զվարճապատումներով, հատկապես այնպիսիներով, որոնք ինչ-որ մեկն արդեն պատմել է ձեր ունկնդիրներին. դրանով նրանց դնում եք անհարմար դրության մեջ: Աշխատեք ոչ միայն դուք զվարճացնել ուրիշներին, այլ նաեւ մյուսներին էլ թույլ տվեք ինչ-որ բան պատմել: Վարվելակերպը, հագուստը, քայլվածքը, ողջ պահվածքը պետք է զուսպ լինեն եւ... գեղեցիկ: Քանզի

ցանկացած գեղեցկություն չի հոգնեցնում: Այն «հասարակական» է: Եվ այսպես կոչված լավ վարվելակերպում միշտ խոր իմաստ կա: Մի՛ մտածեք, որ լավ վարվեցողությունը լոկ ձեւ է, այսինքն՝ ինչ-որ մակերեսային բան: Ձեր վարմունքով դրսևորում եք ձեր էությունը: Ձեր մեջ անհրաժեշտ է դաստիարակել ոչ այնքան վարվելակերպը, որքան այն, ինչ դրսևորվում է դրա միջոցով՝ աշխարհի նկատմամբ հոգատար վերաբերմունքը՝ հասարակության, բնության, կենդանիների ու թռչունների, բույսերի, տեղանքի գեղեցկության, այն վայրերի անցյալի, որտեղ ապրում ես, եւ այլն:

Հարկավոր է ոչ թե հիշել հարյուրավոր կանոններ, այլ միայն մեկը՝ ուրիշներին նկատմամբ հարգալից վերաբերմունքի անհրաժեշտությունը: Իսկ եթե ունենաք դա, նաեւ մի փոքր էլ հնարամտություն, ապա հենց վարվեցողությունը կգա ձեզ մոտ կամ ավելի ճիշտ՝ կգա լավ վարվելաձեւի կանոնների հիշողությունը՝ դրանք ընդունելու ցանկությունն ու ունակությունը:

## Նամակ տասնչորսերորդ ՎԱՏ ԵՎ ԼԱՎ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Յուրաքանչյուր մարդու կյանքում կա տարիքային հետաքրքիր երեւոյթ՝ կողմնակի ազդեցություններ: Այս կողմնակի ազդեցությունները սովորաբար չափազանց ուժեղ են լինում, երբ պատահին կամ աղքատական սկսում են հասուն դառնալ՝ շրջադարձին: Հետո այս ազդեցությունների ուժն անցնում է: Սակայն պատահիներն ու աղքիկները պետք է հիշեն ազդեցություններին, դրանց «ախտաբանության», երբեմն էլ բնականության մասին:

Միգուցե այստեղ առանձնահատուկ ախտաբանություն իսկ չկա. պարզապես հասունացող մարդը՝ տղան կամ աղջիկը, ինքնուրույն: Սակայն ինքնուրույն դառնալով՝ նրանք ձգտում են ամենից առաջ ազատվել իրենց ընտանիքի ազդեցությունից: Սեփական ընտանիքի հետ են կապված իրենց «երեխայության» պատկերացումները: Դրանում մասամբ մեղավոր է լինում հենց ընտանիքը, որը չի նկատում, որ իր «երեխան» եթե անգամ չի էլ դարձել չափահաս, ապա ցանկանում է դառնալ: Բայց ենթարկվելու սովորությունը դեռեւս չի անցել. ահա նա «ենթարկվում» է նրան, ով իրեն հասուն է ճանաչել՝ երբեմն այն մարդուն, որը դեռեւս ինքը չի դարձել հասուն եւ իսկապես ինքնուրույն:

Ազդեցությունները լինում են եւ դրական, եւ բացասական: Հիշեք այդ մասին: Սակայն վատ ազդեցություններից անհրա-

ժեշտ է զգուշանալ: Քանի որ կամք ունեցող մարդը չի տրվում վատ ազդեցությանը, նա ինքն է իր համար ճանապարհ ընտրում: Իսկ թուլական մարդը ենթարկվում է վատ ազդեցություններին: Վախեցնեք անպատասխանատու ազդեցություններից. հատկապես եթե դեռեւս չեք կարողանում ճիշտ եւ հստակ տարբերակել լավը վատից, եթե ձեզ դուր են գալիս ձեր ընկերների գովասանքն ու հավանությունը, ինչպիսին էլ որ դրանք լինեն. միայն թե գովաբանեն:

## Նամակ տասնհինգերորդ ՆԱԽԱՆՁԻ ՄԱՍԻՆ

Եթե ծանրամարտիկը համաշխարհային մոր ռեկորդ է սահմանում ծանրության բարձրացմամբ, դուք նրան նախանձում եք: Իսկ եթե մարմնամարզուհի... Եթե ռեկորդակիրը ջրացատկորդ է...

Սկսեք թվարկել այն ամենը, ինչ գիտեք եւ ինչին կարելի է նախանձել. կնկատեք, որ այն որքան մոտ է ձեր աշխատանքին, մասնագիտությանը, կյանքին, այնքան ավելի զգալի է նախանձի մոտիկությունը: Դա ինչպես խաղում է՝ սառն է, ջերմ է, ավելի ջերմ է, տաք է, այրվեցիր...

Վերջին դեպքում դուք կապված աչքերով գտաք այլ խաղացողների թաքցրած իրը: Ահա նույնն է նաեւ նախանձի դեպքում: Մյուսի ձեռքերումը որքան մոտ է ձեր մասնագիտությանը, հետաքրքրություններին, այնքան ավելի է մեծանում նախանձի այրող վտանգը:

Սարսափելի զգացում, որից ամենից առաջ տառապում է հենց նախանձողը:

Այժմ կհասկանաք՝ ինչպես ազատվել նախանձի չափազանց ցավոտ զգացումից. զարգացրեք ձեր անհատական հակումները, ձեր յուրահատուկ անկրկնելիությունը՝ ձեզ շրջապատող աշխարհում, հավատարիմ մնացեք ինքներդ ձեզ ու երբեք չեք նախանձի:

Նախանձը զարգանում է ամենից առաջ այնտեղ, որտեղ ինքներդ ձեզ համար օտար եք:

Նախանձը զարգանում է ամենից առաջ այնտեղ, որտեղ չեք տարբերակում ձեզ ուրիշներից:

Նախանձում եք՝ նշանակում է չեք գտել ինքներդ ձեզ:

## Նամակ տասնվեցերորդ ԱԳԱՊՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ինձ չեն գոհացնում «ազահություն» բառի բառարանային սահմանումները: «Ինչ-որ բանի նկատմամբ չափազանց, անհագ ցանկությունը բավարարելու ձգտում» կամ «ժլատություն, շահատենչություն» (ռուսերենի չորսհատորյա լավագույն բառարաններից մեկից է. առաջին հատորը լույս է տեսել 1957 թ.): Քառասնամյա բառարանի այս սահմանումը սկզբունքորեն ճիշտ է, սակայն չի փոխանցում նողկանքի այն զգացումը, որը համակում է ինձ, երբ մարդկային ազահության դրսևորումներ են տեսնում: Ազահությունը սեփական արժանապատվության մոռացումն է, մյուսական շահը սեփական անձից վեր դասելու փորձն է, դա հոգեկան ծռակողություն է, միտքը ծայրաստիճան սահմանափակող զարհուրելի ուղղվածություն՝ մտավոր խամրածություն, խղճուկություն, աշխարհին ուղղված դավախտային հայացք, մաղձոտություն սեփական անձի եւ ուրիշների հանդեպ, ընկերության մոռացություն: Մարդու ազահությունը նույնիսկ ծիծաղելի չէ, այլ՝ նվաստացուցիչ: Դա թշնամանք է սեփական անձի եւ շրջապատողների հանդեպ:

Այլ բան է ողջամիտ տնտեսողությունը. ազահությունը դրա աղավաղումն է, հիվանդությունը: Տնտեսողությանը տիրում է միտքը, ազահությունը տիրում է մտքին:


*Շարունակելի*

**Ռուսերենից թարգմանությունը՝  
Տ. Անդրեաս վրդ. ԵՋԵԿՅԱՆԻ**

**Հայ եկեղեցին եւ արեւելահայ դպրոցը ժԹ դարի երկրորդ կեսին**

← ٤٢ 6

Ցարական կայսրության տարածքում հայկական դպրոցները, մինչև Արեւելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միանալը (1828 թ. փետրվարի 10-ին կնքվում է թուրքմենչայի պայմանագիրը, որով ավարտվում է ռուս-պարսկական պատերազմը, եւ Արեւելյան Հայաստանն անցնում է Ռուսաստանի տիրապետության տակ), մի կողմից ենթարկվում էին պետության մշակած կրթական կանոններին, մյուս կողմից՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի գերակայությանը։ Իսկ 1830-ականներից սկսած՝ իրավիճակը կայսրության փոխվեց (1836 թ.). Ցարական կայսրության հարվածներն ուղղվեցին հայ կրթության-լուսավորության դեմ։ 1860-ական թվականների վերջերին ընդունվեցին մի շարք որոշումներ, ստեղծվեց ժողովրդական ուսումնարանների վերատեսուչների եւ «գիրեկտորի» պաշտոնը (տես Վ. Երկանյան, Պայքար հայկական մոր դպրոցի համար Անդրկովկասում, Երեւան, 1970, էջ 73)։ Այս մասին Ստ. Մալխասյանը գրում է. «.....սա մի տերիւնքի շրջան է, որտեղ մանկավարժական մոր սկզբունքներ, առարկաների լայն ծրագիր, իրաւունքների եւ պարտաւորութիւնների սահմանադրութիւն առաջին անգամ Երեւան եկան՝ հին դպրոցի եւ նորան հատուկ կարգերի տեղը բռնելու» (Ստ. Մալխասեան, Համառոտ պատմութիւն Ներսիսեան հոգեւոր դպրոցի յոթանասունհինգամեա գոյութեան (1824—1899), Թիֆլիս, 1900, էջ 83)։ Հատկանշական է, որ ԺԹ դարի երկրորդ կեսին ծխական եւ մասնավոր հայրուղավոր դպրոցներ բացվեցին ինչպես Ախալցխայի, Ախալքալքի եւ Ծալկայի գավառներում, այնպես եւ մաքող Հրացաձմերթական մարզում, մասնավորապէս՝ Թիֆլիսում (տես Ա. Մելքոնյան, Նյութեր Ախալցխայի եւ Ախալքա-



ՄԱՐԻԱՄԵԱՆ-ՅՈՎՀԱՆԵԱՆ ՕՐԻՈՐԳԱՅ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ Ի ՏՓԻՒՍ  
ՀԻՏԷՄԼ Դ՛ 1877 թ.:

լաքի դպրոցների պատմությունից, Երեւան, 2005, էջ 5):

1836 թ. մարտի 11-ին հաստատված «Եկեղեցական կանոնադրությամբ» (Պոլոժենիե) հայերին թույլ էր տրվել ունենալ երկու կարգի դպրոց՝ թեմական հոգեւոր սեմինարիա (յուրաքանչյուր թեմում) եւ տարրական, որոնք պետք է եկեղեցիներին եւ վանքերին կից գործեին: Վախճաւ եպս. Սանդունին գրում է. «Ընկալեալ ցարդն-տիր Կարբեցուլ զցարագիր կանոնադրու-թիւն (1836 թ.), որ վասն կառավարութեան Ս. Էջմիածնի եւ եկեղեցուլ Զայոց Ռուսիոյ եւ տեսեալ զչարաչար խանգարմունս օտա-րոտիս՝ յուզի չարաչար եւ արտասուէ, եւ խնդրէ գերորհուրդ յիշխան Բեիբուլեանի... միանգամայն յուսադէ զնա դիմելի Ռուս. կառավարութեան եւ խնդրել զբարեփոխու-թիւն յօդուածոց՝ զորոց դժգոհ էր» (Վահրամ

**Եսայ. Մանկունի,** Գեորգ Դ եւ իւր ժամանակը (1812—1882), Ս. Էջմիածին, 2015, էջ 246): Ցարական Ռուսաստանում (արեւելահայ) եւ Թուրքիայում (արեւմտահայ) հայկական դպրոցը ղեկավարւթյամբ էր զարգանում, քանի որ զուրկ էր պետական օժանդակութլունից ու միջոցներից: Երկար փորձությունների հետո տասնամյակներ պահպանվեցին, որ 1860-ական թվականների վերջերին ստեղծվեւն դպրոցական կանոնադրություններ: Ժմ դարի 60-ական թվականների վերջերին, Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեորգ Դ-ի (1866—1882 թթ.) հաստատած ծխական, թեմական եւ վանական դպրոցների կանոնադրությունների համաձայն, դպրոցները տարբերակվեցին: Արեւելահայ իրականությունում մեջ Հայ Եկեղեցու հովանու տակ գտնվող կրթական համակարգն ուներ զործնականում կիրառվող հետեւյալ եռաս-

տիճան կառուցվածքը՝ ծխական, հոգեւոր (վիճակային) եւ թեմական (տեւս *Վ. Բար-խուդարյան*, Համառոտ ուրվագիծ Ռուսական կայսրության հայկական դպրոցների պատմության, Երեւան, 2006, էջ 10):

Իրավիճակն այլ էր 1830-ական թվականներին. «Պոլոժենիեն» (Քարծրագոյն կարգադրութիւն յաղագս կառավարութեան գործոց Լուսաւորչական (նստ ռուսականի՝ Գրիգորեան) Յայոց եկեղեցւոյ ի Ռուսաստան) ներմուծում էր կրթության դասային համակարգը, եւ այդ ժամանակ ռուսական կրթական համակարգում գործում էր երեք տեսակի դպրոց՝

1. ծխական՝ գյուղացիների եւ մանր արհեստավորների որդիների համար,
2. զավառական՝ վաճառականների, արդյունաբերողների եւ ազատների որդիների համար,
3. զինմագիւաններ՝ պետական աստիճանավորների եւ ազնվականների որդիների համար:

Վերոնշյալ դասակարգերի որոշ ներկա-  
յացուցիչներ վերնախավի համար նախա-  
տեսված դպրոցներում սովորելու թույլտ-  
վություն կարող էին ստանալ: մի բան, որ  
միանգամայն արգելվում էր հասարակ գյու-  
ղացիներին: Ուշագրավ է, որ կանոնադրու-  
թյան այս հատվածում չի ճշվում հոգեւոր  
դասին պատկանողների կրթական իրա-  
վունքների մասին, ըստ այդմ՝ ենթադրում  
ենք, որ «հոգեւոր» կոչվող դպրոցներում  
կարող էին սովորել միայն հոգեւորական-  
ների երեխաները, ինչը հայ իրականու-  
թյանը բնորոշ էր, այլ ընդհակառակը՝ հայ  
հոգեւոր դպրոցներում աշխարհիկների  
երեխաներն էին զգալի թիվ կազմում:

## Շարունակելի

**Չաքարա սրկ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ  
ԱՆԱԽԻՒՄ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

# Հայրենի հողի եւս մեկ վկայագիր

**Ք**արբառների բուսամուկների եւ հարապից բառաշերտի առանձնացումը կարելու է հայերենի ընդհանուր բառապաշարի ուսումնասիրության համար: Տ. Կյուրեղ եպս. Գաբրիկյանը հոր՝ Կարապետ Գաբրիկյանի «Հայ բուսաշխարհ» գրքի առաջաբանում գրում է. «Հայը երկրագործ, բնութեան ու դաշտի ժողովուրդ, ունեցած է մասնաւոր սերը բնութեան.... Այդ իսկ պատճառով մեր լեզուին մէջ այնքան առատ է բուսական ու երկրագործական բառապաշարը.... սակայն մեր լեզուի բուսամուկները կը մնան ցրուած եւ կարօտ բանասիրական ստուգաբանութեան»:

Ահավասիկ, 33 ԳԱԱ 3. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գիտական խորհրդի երաշխավորմամբ ինստիտուտի հրատարակչությունը լույս է բնծայել Արտակ Վարդանյանի հերթական աշխատանքը՝ «Ճահուկ-Վայքի միջնաբերդի բուսաունուները» վերնագրով, որը, որոշ առումով, նաեւ հեղինակի հոգու պարոք է իր նվիրական բնօրրանի հանդեպ: Մտովի ունենալով բաղձալի ծննդավայրի՝ Նախիջևանի Ազնաբերդ գյուղի պատկերը՝ Արտակ Վարդանյանն իր հիշողության ամբարից գտաւ, թեմային առնչվող հրապարակումներից ու բառարաններից առանձնացրել, բարբառակիրների հավաստումները գրառել, դասդասել եւ գիտական ոճով ներկայացրել է Ճահուկ-Վայքի (Յուխսային Նախիջևանի եւ Վայոց ձորի) բուսաանունները, դրանց առնչվող ժողովրդական ավանդությունները, բույսով պայմանավորված ավանդույթներն ու հավատալիքները, ծխապաշտաւունքային գործառույթները:

Ինչպես հայտնի է, Հայկական լեռնաշխարհի փաթեամ բուսականության յուրաքանչյուր բուսատեսակ ունի մեկից ավելի՝ երբեմն մեկ տասնյակի հասնող գրական եւ բարբառային անվանումներ, որոնց ուսումնասիրությունը տեւական աշխատանք եւ գիտելիք է պահանջում:

Բուսական աշխարհի հատկանշող իմաստային բառաշերտի քննությանմբ արտացոլվում է ոչ միայն խնդրո առարկա տարածքի բուսապատկերը, այլև բազա-

հայտվում են բնակիչների լեզվամտա-  
ծողությունը, աշխարհընկալումը, բա-  
նախուսական բանաձեռումների հիմքը,  
կենցաղային առանձնահատկությունները  
եւ այլ իրողություններ:

Որպես բարբառային բառապաշարի մաս՝ բուսանունները, բուն իմաստից բացի, փոխաբերացված, անձնավորված կամ իմաստային տարբերակվածությամբ, դրական կամ բացասական երանգավորումով պահպանված են հատկապես բարբառային խոսքում, ժողովրդական բանավոր ստեղծագործություններում: Մարդուն բույսի կամ պտուղի հետ նույնացնելը (վարդ՝ «աղջիկ», խնձոր՝ «հարս» են այլև), բույսը որպես խորհրդանշան ընկալելը (սոխ են սխտոր՝ «չարի խափանում», վարդ քաղել՝ «սեր խոստովանել, ամուսնության առաջարկ անել» են այլև) բնորոշ են ժողովրդական պատկերավոր մտածողությանը: Մի շարք բույսեր ունեն խորհրդանշական, սնտոիապաշտական, դավանաբանական, արվեստաբանական բովանդակություն, որոնք էլ պատճառ են դառնում բուսանունների՝ գործուն բառապաշարի մաս կազմելուն:

Գրքում ներկայացված բուսամուկները, շարադրանքի գիտական ոճով պայմանավորված, հիմնականում բուսաբանական գիտաբաններ են, որոնք խոսքային այլ որակներում կարող են համոզես գալ մասե որպես խոսքային սովորական միավորներ:

Որոշակի բույս մշղող ամուններից բացի՝ գրքում զետեղված են մասե բույս հասկանցությանն առնչվող, բույսից ածանցյալ, բույսի արդյունք՝ «բար», «պտուղ» հատկանշող բառեր, դրանցով բաղադրված որոշ մանրատեղանուկներ ու հատկանուկներ, որոնց մի մասը գիտական ճշգրտություն է ստանում հեղինակի կատարած ստուգաբանություններով, վկայաբերած պարսկերեն, արաբերեն, թյուրքերեն, ռուսերեն փոխառյալ համարժեքներով:

Գրքում ի մի բերված «բույս» հասկացության վերաբերող բազմաթիվ տեղեկությունների շնորհիվ հեղինակը գիտելիք է հաղորդում բուսամանուշների տեղավայրի, տեսակային բաշխման, արտաքին նկարագրի, կենսաբանական հատկությունների, օգտագործման, պահպանման, բուսականության և այլն:



րագրության, բուժական հատկանիշների, հարեւան ժողովուրդների՝ դրանց տված օտարահունչ անվանումների, դրանց հայերենացման եւ արժեքավոր այլ փաստերի մասին: Աշխատանքը նաեւ յուրօրինակ հիշատակարան է Նախիջևանի մասին եւ կարող է վստահելի աղբյուր հանդիսանալ հայրենի բնաշխարհը, ընդհանուր բնապատկերը բավարար ծանաչելու համար, այլ կերպ ասած՝ բուսանմունց այստեղ հայրենի հողի վկայագիր է:

Բարեխիղճ գիտնականի պատմասխանատվությամբ, թեմային վերաբերող տպագիր նյութերի քաջագիտակությամբ, բառարանային հարակից փաստերը համադրելու հմտությամբ շարադրված բարբառագիտական այս մանրակրկիտ աշխատանքը արժեքավոր է ոչ միայն լեզվաբանների, այլև բուսագետների, աշխարհագետների եւ այլոց համար: Լեզվական առկա հարուստ նյութը, գրքի կառուցվածքը, իմաստային ենթախմբերի առանձնացման եղանակները օգտակար կարող են լինել բառապաշարի իմաստային այլ խմբեր ուսումնասիրելու համար:

Ինչպես հայտնի է, բացատրական բառարաններում բուսանունները հաճախ մեկնաբանվում են «բույսի մի տեսակ» ընդհանուր ձեակերպմամբ: Այս նկատառու-

մով է Գ. Թորոսյանն իր «Կարոն բարբառի  
Շիրակի խոսվածքին հատուկ բարբառային  
բառերի քննություն» աշխատանքում նշում.  
«Բարբառային բառերը քննելով՝ բարբառա-  
գիտական բառարաններում հաճախ ենք  
հանդիպում դժվարությունների, քանի որ  
բառերի մի սովոր խոյուն գրառված է՝ եւ  
կարոտ է լուսաբանման: Ուստի առաջար-  
կում ենք հայ բարբառագիտությամբ զբաղ-  
վող մասնագետներին ձեռնամուխ լինել  
այդ շնորհակալ գործին»: Այս աշխատանքը  
գալիս է համալրելու, պարզաբանելու, նաեւ  
ձեզօրտելու մի շարք բուսանունների ընդհա-  
նուր նկարագրիր:

Ճահուկ-Վայքի միջբարբառի բուսանուններն ի մի են բերված գրքի «Հավելված» բաժնում, որը պատրաստի նյութ է ուսումնասիրողների և բառարանագիտների համար:

**Հայկանուշ ՄԵՍՐՈՊՅԱՆ**  
**Բանասիրական գիտ. դոկտոր**

**ՔՐԻՍՏՈՆՅԱ  
ՀԱՅԱՍՏԱՆ**

Կրոնական, մշակութային,  
լրատվական երկշաբաթաթերթ

**Հիմնադիր՝**  
Մալո Աթոր Սուրբ Էջմիածին

**Հրատարակիչ՝**  
«Քրիստորիոս Զատարյան»

«Բիլլումսոնյա հայամասն  
թերթի խմբագրություն  
**Ռեպուբլիկեյն**

Արփինե Չանթիկյան

**Գրանցման վկայական՝ 624**  
**Խմբագրության հասցեն՝**  
Լիպար Առաք. Առաք. Եղիաշեն

Մայր Աթոռ Սուրբ Էջնիս  
Հեռախոս՝ (010) 517 280

**ԷԼ. փոստ՝**  
qristonyahayastan1@gmail.com

gristhay@etchmiadzin.am  
web կայք`

krishayas.wordpress.com  
etchmiadzinlibrary.am/en/kristonya-hayastan

Ստոր. տպագր. 19.12.2022 թ.  
**Տպաքանակը՝ 1225**

---